ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ
ՓՐԱՅՎԻԹ & ԻՆՎԵՍՏՄԵՆԹ ԲԵՆՔԻՆԳ

«ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏ

Ակտի համարը և անվանումը՝	*№ 231, ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ*
Ընդունող մարմինը՝	*Տնօրինություն*
Ընդունման ամսաթիվը և հիմքը՝	*18.02.2021թ. թիվ 04-Լ որոշում*
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝	*19.02.2021թ.*
Խմբագրության հերթական համարը՝	*15*
Կիրառող ստորաբաժանում(ներ)ը՝	*Ներդրումային դեպարտամենտ, Հաճախորդների սպասարկման դեպարտամենտ, Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների դեպարտամենտ, Ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման դեպարտամենտ*
Վերանայման համար պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը՝	*Ներդրումային դեպարտամենտ*
Հրապարակայնությունը՝	☒ *հրապարակվող* ☐ *սահմանափակ* ☐ *գաղտնի*

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույնով սահմանվում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Բանկ») կողմից Արժեթղթերով գործառնությունների իրականացման ընթացակարգը:

1.2. Բանկը գործառնություններն իրականացնում է տվյալ ոլորտը կարգավորող ՀՀ համապատասխան իրավական ակտերով, ինչպես նաև Բանկի կողմից ընդունված ներքին ակտերով:

2. ՍՈՒՅՆ ԱԿՏՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Թողարկող՝** ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ պետական կառավարման այլ մարմիններ, ինչպես նաև այլ թողարկողներ, որոնք ՀՀ կենտրոնական բանկում գրանցված Ազդագրի հիման վրա տեղաբաշխել են պարտատոմսեր և/կամ բաժնետոմսեր, գործում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան և պարտավորություններ են կրում Պարտատոմսերի սեփականատերերի առջև՝ Պարտատոմսերով ամրագրված իրավունքների իրականացման առնչությամբ:

2.2. **Գործակալ՝** յուրաքանչյուր իրավաբանական անձ, որը ՀՀ Ֆինանսների նախարարության հետ կնքել է համապատասխան գործառույթներն իրականացնելու պայմանագիր: Պարտատոմսերով գործարքների իրականացման ժամանակ Գործակալը գործում է իր անունից՝ իր հաշվին կամ իր անունից՝ ներդրողի հաշվին և վերջինիս հանձնարարությամբ:

2.3. **Ներդրող՝** Պարտատոմսերի սեփականատեր հանդիսացող և Ենթապահառուի հետ Սպասարկման և/կամ Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած ֆիզիկական կամ իրավաբանական անձ: Սույն կարգի իմաստով Ներդրող կարող են համարվել նաև ՀՀ ռեզիդենտ բանկեր կամ ներդրումային ընկերություններ, որոնց հետ Բանկը չի կնքել սույն կետում նշված պայմանագրերը կամ պայմանագրերից որևէ մեկը:

2.4. **Պետական պարտատոմս՝** ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի, ինչպես նաև ՀՀ պետական կառավարման այլ մարմինների կողմից թողարկված պարտատոմսեր և այլ արժեթղթեր:

2.5. **Կորպորատիվ արժեթուղթ՝** ՀՀ կենտրոնական բանկում գրանցված Ազդագրի հիման վրա տեղաբաշխված պարտատոմսեր և/կամ բաժնետոմսեր, որոնց շրջանառությունը կարգավորող իրավական ակտերի համաձայն Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան /այսուհետ՝ ՀԿԴ/ կհանդիսանա տվյալ պարտատոմսերի Պահառու:

2.6. **Արժեթուղթ՝** Պետական պարտատոմսեր և կորպորատիվ արժեթղթեր:

2.7. **Արտասահմանյան արժեթուղթ՝** ՀՀ տարածքից դուրս թողարկված և սույն ընթացակարգի 8-րդ գլխի չափանիշներին համապատասխանող արժեթուղթ,

2.8. **Պահառու՝** Թողարկողի առջև Պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման պարտավորությունները կրող, Պարտատոմսերի թողարկման գլոբալ հավաստագիրը պահող և հաշվառող, պահառուական գործունեություն իրականացնող ենթակառուցվածք:

2.9. **Արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ (այսուհետ՝ «Համակարգ»)՝** Պահառուի մոտ վարվող դեպո հաշիվներում Պարտատոմսերի հաշվառման և

Պարտատոմսերով գործարքների վերջնահաշվարկների իրականացումն ապահովող համակարգ:

2.10. **Ենթապահառու՝** պահառուական գործունեություն իրականացնող ենթակառուցվածք, որտեղ ըստ առանձին Ներդրողների հաշվառվում են վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող պարտատոմսերը: Սույն ակտի համաձայն Ենթապահառուի գործառույթներ իրականացնում է Բանկը:

2.11. **Արժեկտրոն՝** Թողարկողի կողմից Պարտատոմսի սեփականատիրոջը մինչև մարման օրը ներառյալ նախապես սահմանված որոշակի պարբերականությամբ և տոկոսադրույքով պարտատոմսի անվանական արժեքի դիմաց վճարվող տոկոսագումարն է:

2.12. **Դեպո հաշիվ՝** Պարտատոմսերի հաշվառման համար նախատեսված պահառուի/ենթապահառուի գրառումների բազմություն, որը միավորված է ընդհանուր հատկանիշներով:

2.13. **Աճուրդ՝** Պարտատոմսերի թողարկումների տեղաբաշխման կամ հետգնման նպատակով «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ ՀՖԲ) կողմից կազմակերպվող փակ մրցութային գործընթաց, որի ժամանակ Պարտատոմս ձեռք բերելու կամ վաճառելու նպատակով պոտենցիալ գնորդները կամ վաճառողները ներկայացնում են Հայտեր:

2.14. **Միջնորդավճար՝** գումար, որը գանձվում է Ներդրողից՝ միջնորդային գործարքների իրականացման համար՝ համաձայն Բանկի սակագների:

2.15. **Սպասարկման պայմանագիր՝** «ՀՀ պետական պարտատոմսերի դեպո հաշվի բացման և սպասարկման պայմանագիր», որը կնքվում է յուրաքանչյուր Ներդրողի հետ և համաձայն որի Ներդրողի համար Բանկում բացվում է դեպո հաշիվ:

2.16. **Դեպո հաշվարկներ՝** Ենթապահառուների և Պահառուի կողմից իրականացվող գործառնությունների բազմություն, որի արդյունքում իրականացվում է Պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում գործարքի մասնակիցների միջև «առաքում՝ վճարման դիմաց (DVP)» կամ «ազատ առաքման (առանց FOP)» սկզբունքով:

2.17. **Գնորդ՝** գործարքի կատարման օրը սեփականության իրավունքով Պարտատոմսեր ձեռքբերող:

2.18. **Վաճառող՝** գործարքի կատարման օրը Պարտատոմսեր օտարող:

2.19. **Ռեպո/հակադարձ ռեպո գործարք՝** այն գործարքը, որով Վաճառողը Գնորդին է օտարում Պարտատոմսերը՝ գործարքի մարման օրը դրանք հետ գնելու և սահմանված տոկոսագումար վճարելու պարտավորությամբ, իսկ Գնորդը սեփականության իրավունքով ձեռք է բերում Պարտատոմսերը՝ գործարքի մարման օրը դրանք հետ վաճառելու պարտավորությամբ:

2.20. **Հայտ՝** Բանկի կողմից իր անունից իր հաշվին (այսուհետ՝ «Հայտ 1») և/կամ իր անունից Ներդրողի հաշվին և վերջինիս հանձնարարությամբ (այսուհետ՝ «Հայտ 2») Աճուրդի մասնակցության համար հիմք հանդիսացող փաստաթուղթ /Հավելված 1.1/:

2.21. **Ներդրող(ներ)ի հայտ՝** Ներդրողների կողմից Աճուրդին մասնակցելու նպատակով Բանկ ներկայացվող փաստաթուղթ, որի/որոնց հիման վրա Բանկն Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացնում է Հայտ 2-ը:

2.22. **Հաղորդագրություն՝** Բանկի կողմից ներկայացված Հայտերի բավարարման/մերժման վերաբերյալ պաշտոնական տեղեկացում:

2.23. **Գլխավոր հաշվապահ՝** Բանկի Գլխավոր հաշվապահ:

2.24. **Ծրագրային համակարգ՝** Բանկի հաշվապահական հաշվառման և հաշվետվողական «Գործառնական օր» ծրագրային համակարգ:

2.25. **Հանձնարարական՝** Ներդրողի կողմից Բանկ ներկայացվող և Ներդրողի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով Բանկի կողմից բրոքերային գործարքի կնքման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ:

2.26. **Ներդրումային դեպարտամենտ՝** Բանկում Արժեթղթերով գործառնությունների իրականացման համար պատասխանատու ստորաբաժանում:

2.27. **ՀՍԴ՝** Բանկում հաճախորդների սպասարկման համար պատասխանատու ստորաբաժանում:

2.28. **Գործառնական բաժին** (այսուհետ՝ ԳԲ)՝ Բանկում հաճախորդների սպասարկման համար պատասխանատու ենթաստորաբաժանում:

2.29. **Համադրման բաժին** (այսուհետ՝ ՀԲ)՝ Բանկում համադրման գործառույթների համար պատասխանատու ենթաստորաբաժանում:

2.30. **ՀՀԴ՝** հաշվապահական հաշվառման, Ծրագրային համակարգ տվյալների մուտքագրման, ստուգման և հաստատման համար պատասխանատու ստորաբաժանում:

2.31. **Վերջնահաշվարկի օր՝** Ներկայացված Հայտերի բավարարման/մասնակի բավարարման արդյունքում ձեռք բերված/վաճառված պարտատոմսերի գծով հաշվարկների փաստացի իրականացման օր:

2.32. **ՌԿՀԱԴ՝** Ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման համար պատասխանատու ստորաբաժանում:

3. ԱՃՈՒՐԴՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Բանկն իրավունք ունի իր անունից՝ իր հաշվին կամ իր անունից՝ Ներդրողի հանձնարարությամբ և հաշվին, մասնակցելու Աճուրդներին:

3.1.1. Բանկը, Աճուրդի անցկացման օրը, մինչև տվյալ Աճուրդին մասնակցելու համար սահմանված վերջնաժամկետը ներկայացնում է Աճուրդին մասնակցելու Հայտ /Հավելված 1.1/ :

3.1.2. Հայտերում ընդգրկված առաջարկությունների առավելագույն քանակը սահմանվում է ՀՖԲ կանոններով:

3.1.3. Աճուրդին մասնակցելու համար ՆԴ պատասխանատու աշխատակիցը տվյալ Աճուրդին մասնակցելու համար սահմանված վերջնաժամկետից առնվազն 30 րոպե առաջ ՆԴ ղեկավարին է ներկայացնում Աճուրդին մասնակցելու համար նախապատրաստված և իր ու ՆԴ ղեկավարի տեղակալի կողմից ստուգանշված Հայտերը, ինչպես նաև տեղեկացնում է տեղի ունեցած վերջին թողարկումների արդյունքների և շուկայում ձևավորված տոկոսադրույքների մասին: ՆԴ ղեկավարը, որպես Հայտերի տվյալների համաձայնության նշան, ստուգանշում է վերջիններս, որից հետո Հայտերը ներկայացվում են ստորագրման Գլխավոր հաշվապահին, ապա նաև Գործադիր տնօրենին կամ վերջինիս կողմից լիազորված՝ համապատասխան իրավասություն ունեցող անձին:

3.1.4. Գործադիր տնօրենի կողմից ստորագրվելուց հետո Հայտերի բնօրինակները ներկայացվում են Գլխավոր հաշվապահին, իսկ դրանց լուսապատճենները պահվում են ՆԴ-ում՝ համապատասխան էլեկտրոնային թղթապանակում:

3.1.5. Ստորագրված Հայտերը ՆԴ պատասխանատու աշխատակիցը մինչև տվյալ Աճուրդին մասնակցելու համար Հայտերի ընդունման վերջնաժամկետը

ներկայացնում է Աճուրդին՝ ՀՖԲ կողմից սահմանված ֆորմատներով կամ ուղարկում է Գործակալին վերջինիս հետ կնքված պայմանագրի համաձայն:

3.1.6. Բանկի կողմից ուղարկված Հայտերը Աճուրդի պայմանների և/կամ առանձին Հայտին ներկայացվող պահանջների խախտման դեպքում չեն ընդունվում, ինչի մասին Բանկը տեղեկացվում է հատուկ հաղորդագրության միջոցով կամ Գործակալի կողմից: Հայտը չընդունվելու դեպքում Բանկը մինչև տվյալ Աճուրդին մասնակցելու համար Հայտերի ընդունման վերջնաժամկետը կարող է ներկայացնել նոր Հայտ:

3.1.7. Տարբեր տեսակի վթարների հետևանքով (կապի խզում, Բանկի հսկողության ներքո գործող տեխնիկածրագրային ապահովման անսարքություն և այլն) Հայտերն ուղարկելու անհնարինության դեպքում Հայտը/երը ներկայացվում են թղթային տարբերակով՝ փակ ծրարով:

3.1.8. Թղթային եղանակով Հայտերը կարող են ներկայացվել տվյալ Աճուրդի անցկացման օրը մինչև տվյալ Աճուրդին մասնակցելու Հայտերի ընդունման համար սահմանված վերջնաժամկետը:

3.1.9. Աճուրդի անցկացման օրը ՆԴ պատասխանատու աշխատակիցը ՀՖԲ կայք էջից կամ Գործակալից ստանում է Հայտի ընդունման ծանուցումը և Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով վերջինիս լուսապատճենն ուղարկում Բանկի Գլխավոր հաշվապահին և ՀՀԴ աշխատակցին:

3.1.10. ՀՀԴ աշխատակիցը BankMail համակարգով իրականացնում է գումարի փոխանցում Գործակալի հաշվին:

3.1.11. ՆԴ պատասխանատու աշխատակիցը ՀՖԲ կայք էջից կամ Գործակալից ստանում է Հաղորդագրությունը և Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով վերջինիս լուսապատճենն ուղարկում Բանկի Գլխավոր հաշվապահին և ՀՀԴ աշխատակցին: Հայտի մերժման դեպքում գումարը վերադարձվում է:

3.1.12. Հայտի հաստատման դեպքում Բանկի Գլխավոր հաշվապահին և ՀՀԴ աշխատակցին Հաղորդագրությունն ուղարկելուց հետո ՆԴ պատասխանատու աշխատակիցը Ծրագրային համակարգում իրականացնում է համապատասխան ձևակերպումները, որը հաստատվում է ՆԴ ղեկավարի տեղակալի կամ ՆԴ ղեկավարի կողմից: Ծրագրային համակարգում համապատասխան ձևակերպումներն իրականացվում են աճուրդի անցկացման կամ վերջինիս հաջորդ աշխատանքային օրը:

3.1.13. Հիմք ընդունելով ստացված Հաղորդագրության պատճենը և Ծրագրային համակարգում իրականացված ձևակերպման՝ ՆԴ ղեկավարի տեղակալի կամ ՆԴ ղեկավարի հաստատումը՝ նույն օրվա ընթացքում ՀՀԴ աշխատակիցը կատարում է համապատասխան հաշվապահական ձևակերպումները:

3.1.14. ՀՀԴ աշխատակիցը ոչ ուշ, քան մինչև հաջորդ աշխատանքային օրվա սկիզբը, ստուգում է պահառուի մոտ բացված Բանկի դեպո հաշիվների մնացորդների համապատասխանությունը Բանկում եղած տվյալների հետ:

3.2. Բանկի հետ «Պետական (գանձապետական) պարտատոմսերի շուկայում ծառայությունների մատուցման» գլխավոր համաձայնագիր (Հավելված 1) կնքած Ներդրողների կողմից Աճուրդին մասնակցության և դրա հետ կապված բոլոր փոխհարաբերությունները կարգավորվում են վերոնշյալ գլխավոր համաձայնագրով:

3.3. Պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման Աճուրդներին Ներդրողների մասնակցությունն ապահովվում է հետևյալ ընթացակարգերի համաձայն,

3.3.1. Ներդրողն Աճուրդի անցկացման օրը Հայաստանի ֆոնդային բորսայի /այսուհետ՝ ՀՖԲ/ Աճուրդի համար Հայտերի ընդունման սկզբնաժամկետից առնվազն 60 րոպե առաջ ԳԲ աշխատակցին թղթային կամ Հաճախորդի հետ համաձայնեցված այլ միջոցներով ներկայացնում է Պարտատոմսերի ձեռքբերման հայտ (Հավելված 1.1): Թղթային եղանակի դեպքում Հայտը ներկայացվում է երկու օրինակից:

3.3.2. Ներդրողը պարտավոր է ՀՖԲ-ի կողմից տվյալ Աճուրդի համար Հայտի ընդունման սկզբնաժամկետից առնվազն 60 րոպե առաջ Բանկում սպասարկվող իր ընթացիկ դրամային հաշվին ապահովել Հայտում նշված Պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ դրամական միջոցների առնվազն 10 տոկոսի չափով գումար /Բանկի հետ նախնական համաձայնության պայմանով/, ներառյալ Բանկի կողմից գանձվող միջնորդավճարները, այլապես Հայտը մերժվում է: Հայտը Բանկ ներկայացնելով՝ Ներդրողը միաժամանակ լիազորում է Բանկին անակցեպտ կարգով գանձել Ներդրողի համապատասխան հաշվում առկա դրամական միջոցները ի կատարումն Ներդրողի՝ սույն կարգով ստանձնած պարտավորությունների պատշաճ կերպով կատարման:

3.3.3. Ներդրողի հայտում ընդգրկվող առաջարկությունների քանակը սահմանվում է ՀՖԲ կանոններով: Առաջարկությունների քանակը նախապես պետք է համաձայնեցվի ՆԴ պատասխանատու աշխատակցի հետ:

3.4. Հաճախորդի կողմից Հայտը թղթային կամ ԻնտերնետԲանկ համակարգի միջոցով ներկայացնելու դեպքում.

3.4.1. ԳԲ աշխատակիցը ստուգում է Հայտը ներկայացնող անձի լիազորությունները, Հայտի լրացման ճշտությունն ու ամբողջականությունը, ինչպես նաև տվյալ Ներդրողի համապատասխան հաշիվներում առկա միջոցների բավարարությունը՝ հաշվի առնելով 3.3.2 կետի դրույթները, որից հետո համաձայնեցնում է Հայտի էական պայմանները ՆԴ պատասխանատու աշխատակցի հետ: Եթե Հայտն ամբողջական լրացված չէ կամ լրացված է ոչ ճիշտ, ապա Հայտը չի ընդունվում և վերադարձվում է Ներդրողին կամ ուղարկվում է հաղորդագրություն մերժման մասին՝ նշելով պատճառը:

3.4.2. Թղթային տարբերակով Հայտը համարվում է ընդունված ԳԲ աշխատակցի կողմից Հայտի վրա այն ընդունելու մասին նշում կատարելուց և ստորագրելուց հետո: Ընդ որում «ընդունված է» նշագրումով և ԳԲ աշխատակցի ստորագրությամբ օրինակը վերադարձվում է Ներդրողին կամ վերջինիս կողմից լիազորված անձին: Հայտերի վրա նշվում է նաև Հայտի ընդունման ժամը և ամսաթիվը: Հայտի բնօրինակը մնում է ԳԲ աշխատակցի մոտ: ԻնտերնետԲանկ համակարգով ընդունված Հայտի բոլոր տվյալների համապատասխանության դեպքում ԳԲ աշխատակիցը Ներդրողին ուղարկում է Հայտի ընդունման մասին հաղորդագրություն, իսկ Հայտի լուսապատճենը պահպանում է համապատասխան էլեկտրոնային թղթապանակում: Հայտի ընդունումից հետո ԳԲ աշխատակիցը Ներդրողի հաշվից գումարը փոխանցում է համապատասխան տարանցիկ հաշվին:

3.4.3. Տվյալ Աճուրդի համար ՀՖԲ կողմից սահմանված Հայտերի ընդունման վերջնաժամկետից առնվազն 15 րոպե առաջ ԳԲ աշխատակիցը Հայտի լուսա-

պատճենը Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով ուղարկում է ՆԴ պատասխանատու աշխատակցին:

3.5. ՆԴ աշխատակիցը հայտերը ներկայացնում է Աճուրդին՝ ՀՖԲ կողմից սահմանված ֆորմատներով կամ ուղարկում է Գործակալին վերջինիս հետ կնքված պայմանագրի համաձայն: ՀՖԲ կայք էջից կամ Գործակալից ստանալով Հայտի ընդունման ծանուցումը՝ ՆԴ աշխատակիցը Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով վերջինիս լուսապատճենն ուղարկում է Բանկի Գլխավոր հաշվապահին և ՀՀԴ աշխատակցին: ՀՀԴ աշխատակիցը BankMail համակարգով իրականացնում է Ներդրողների գումարի փոխանցում Գործակալի հաշվին: Աճուրդի պաշտոնական արդյունքները ՀՖԲ պաշտոնական կայքից կամ Գործակալից ստանալուց հետո ՆԴ պատասխանատու աշխատակիցը Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով վերջինիս լուսապատ-ճենն ուղարկում է ՀՍԴ ղեկավարին և Գլխավոր հաշվապահին:

3.6. Աճուրդի պաշտոնական արդյունքների հիման վրա ՆԴ պատասխանատու աշխատակիցը պատրաստում է Ներդրողների կողմից ներկայացված և Աճուրդի արդյունքներով բավա-րարված և/կամ մերժված Հայտերի վերաբերյալ տեղեկանք (Հավելված 1*), որը ստուգվում և ստորագրվում է ՆԴ ղեկավարի կամ ՆԴ ղեկավարի տեղակալի կողմից: Տեղեկանքի բնօրինակը մնում է ՆԴ-ում՝ համապատասխան թղթապանակում, իսկ վերջինիս լուսապատճենը Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով ՆԴ պատասխանատու աշխատակիցն ուղարկում է ՀՀԴ աշխատակցին և ՀՍԴ, ԳԲ և ՀԲ ղեկավարներին:

3.7. Սույն գլխի 3.6. կետով նախատեսված տեղեկատվությունը ստանալուց հետո ԳԲ աշխատակիցը կազմում է Հայտի բավարարման (մասնակի բավարարման) կամ մերժման հաղորդագրություն (Հավելված 1.2), որի թղթային տարբերակը ստորագրվում է վերջինիս և ՀՍԴ ղեկավարի տեղակալի և/կամ ԳԲ պետի կողմից և տրամադրվում Ներդրողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

3.8. 3.6 կետով սահմանված տեղեկանքի հիման վրա Բանկի կողմից իրականացվում են հետևյալ գործողությունները.

3.8.1. *Հայտի լրիվ բավարարման դեպքում՝ /Հաճախորդի կողմից Հայտում ներկայացված անվանական ծավալին համարժեք գործարքի ընդհանուր գումարի ապահովման դեպքում/* մինչև Աճուրդի անցկացման օրվան հաջորդող գործառնական օրվա ավարտը ԳԲ աշխատակիցը Հաճախորդի Հայտի համաձայն ձեռք բերված պարտատոմսերը փոխանցում է Հաճախորդի Հայտում նշված դեպո հաշվին,

3.8.2. *Հայտի լրիվ բավարարման դեպքում՝ /Հաճախորդի կողմից Հայտում ներկայաց-ված անվանական ծավալին համարժեք գործարքի ընդհանուր գումարի առնվազն 10 տոկոսի չափով գումարի ապահովման դեպքում/* մինչև Աճուրդի անցկացման օրվան հաջորդող գործառնական օրվա ավարտը Հաճախորդի հետ կնքվում է Ռեպո համաձայնագիր, որի առարկա կհանդիսանան Հայտում ներկայացված պարտատոմսերը բավարարված ծավալի չափով,

3.8.3. *Հայտի մասնակի բավարարման դեպքում՝ /Հաճախորդի կողմից Հայտում ներկայացված անվանական ծավալին համարժեք գործարքի ընդհանուր գումարի ապահովման դեպքում/* մինչև Աճուրդի անցկացման օրվան հաջորդող գործառնական օրվա ավարտը ԳԲ աշխատակիցը Հաճախորդի Հայտի համաձայն ձեռք բերված արժեթղթերը փոխանցում է Հաճախորդի Հայտում նշված դեպո հաշվին, իսկ չբավարարված մասին համապատասխան

դրամական միջոցները (հանած Գործակալի միջնորդավճարը) մինչև Աճուրդի անցկացման օրվա ավարտը տարանցիկ հաշվից փոխանցում է Հաճախորդի Հայտում նշված ՀՀ դրամով հաշվին,

3.8.4. *Հայտի մասնակի բավարարման դեպքում՝ /Հաճախորդի կողմից Հայտում ներկայացված անվանական ծավալին համարժեք գործարքի ընդհանուր գումարի առնվազն 10 տոկոսի չափով գումարի ապահովման դեպքում/* մինչև Աճուրդի անցկացման օրվան հաջորդող գործառնական օրվա ավարտը Հաճախորդի հետ կնքվում է Ռեպո համաձայնագիր, որի առարկա կհանդիսանան Հայտում ներկայացված պարտատոմսերը բավարարված ծավալի չափով, իսկ նախնական ներկայացված Հայտում նշված անվանական ծավալին համարժեք գործարքի գումարի և մասնակի բավարարված անվանական ծավալին համարժեք գործարքի գումարների տարբերությունը /նախապես համաձայնեցվելով կողմերի միջև/ կարող է տարանցիկ հաշվից փոխանցվել Հաճախորդի հաշվին:

3.8.5. *Հայտի մերժման դեպքում՝* վերադարձված գումարը ՀՀԴ աշխատակիցը կրեդիտագրում է տարանցիկ հաշվին և մինչև Աճուրդի անցկացման օրվա գործառնական օրվա ավարտը ԳԲ աշխատակիցը Հաճախորդի Հայտում նշված պարտատոմսերի ձեռք բերման համար անհրաժեշտ դրամական միջոցները (ներառյալ Գործակալի միջնորդավճարը) տարանցիկ հաշվից փոխանցում է Հաճախորդի Հայտում նշված ՀՀ դրամով հաշվին:

3.8.6. Եթե Հայտի բավարարման կամ մասնակի բավարարման վերջնահաշվարկի իրականացման ժամանակ Հաճախորդի դրամային հաշվում առկա դրամական միջոցները չեն բավականացնում բավարարված/մասնակի բավարարված Հայտերից բխող պարտավորությունների ամբողջական կատարմանը, ապա Հաճախորդի մոտ առաջանում է դրամական միջոցների գծով պարտավորություն Բանկի նկատմամբ, որի դեպքում Բանկի և Հաճախորդի միջև կնքվում է Ռեպո համաձայնագիր:

3.9. Աճուրդին հաջորդող բանկային օրը ՀԲ և ՀՀԴ աշխատակիցները պարտավոր են համադրել ՀՀ կենտրոնական բանկից ստացված քաղվածքների և տեղեկանքների տվյալների համապատասխանությունը Բանկում եղած տվյալների հետ:

3.10. Պարտատոմսերի հետգնման Աճուրդներին Ներդրողների մասնակցությունն ապահովվում է հետևյալ ընթացակարգերի համաձայն:

3.10.1. Պարտատոմսերի հետգնումն իրականացվում է համաձայն Պարտատոմսերի հետգնման մասին թողարկողի կողմից տրված հայտարարության մեջ նշված պայմանների:

3.10.2. Հետգնման Աճուրդի առարկա կարող են հանդիսանալ միայն առանց որևէ սահմանափակումների (ազատ) Պարտատոմսերը: Բանկն իր հաճախորդների համալիր սպասարկման արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հետգնման աճուրդի օրը Բանկում Ռեպո համաձայնագրի կամ այլ կերպ ծանրաբեռնված Պարտատոմսերի մասով Հաճախորդից կարող է ընդունել հետգնման մասնակցության հայտ: Այդ պարագայում ՆԴ աշխատակիցը ստուգում է, թե արդյոք տվյալ պարտատոմսերը նշված գնով վաճառելու դեպքում ամբողջությամբ մարվում է ռեպո համաձայնագիրը: Վաճառքի արդյունքում ռեպո համաձայնագրի

ամբողջությամբ չմարման դեպքում հայտը մերժվում է կամ հաճախորդից պահանջվում են լրացուցիչ դրամական միջոցների սառեցում համապատասխան հաշվին: Տվյալ հայտի մասնակի բավարարման պարագայում հաշվարկներն իրականացվում են փոխադարձ պարտավորությունների հաշվանցման (նեթինգի) միջոցով և, անհրաժեշտության դեպքում, նաև նոր ռեպո համաձայնագրի կնքմամբ:

3.10.3. Ներդրողը Պարտատոմսերի հետգնման Աճուրդի անցկացման օրը ՀՖԲ-ի կողմից տվյալ Աճուրդի համար Հայտերի ընդունման սկզբնաժամկետից առ-նվազն 60 րոպե առաջ ԳԲ աշխատակցին թղթային կամ ԻնտերնետԲանկ համակարգի միջոցով ներկայացնում է Պարտատոմսերի վաճառքի հայտ (Հավելված 1.1): Թղթային եղանակի դեպքում Հայտը ներկայացվում է երկու օրինակից:

3.10.4. Ներդրողը պարտավոր է ՀՖԲ-ի կողմից տվյալ Աճուրդի համար Հայտերի ընդունման սկզբնաժամկետից առնվազն 60 րոպե առաջ Բանկում սպասարկվող իր Դեպո հաշվին ապահովել Հայտում նշված վաճառվող Պարտատոմսերի ողջ ծավալը, այլապես Հայտը մերժվում է:

3.10.5. Մրցակցային առաջարկություններով հետգնման դեպքում Ներդրողի Հայտում պարունակվող առաջարկությունների քանակը նախապես պետք է համաձայնեցվի ՆԴ պատասխանատու աշխատակցի հետ: Սահմանված քանակը գերազանցելու դեպքում դրանք կատարվում են ըստ ընդունման հաջորդականության:

3.10.6. Նախապես հայտարարված եկամտաբերությամբ հետգնման դեպքում Հայտը կարող է պարունակել միայն մեկ առաջարկություն հայտարարված եկամտաբերությամբ՝ Պարտատոմսերի կոնկրետ թողարկման գծով:

3.11. Հաճախորդի կողմից Հայտը թղթային եղանակով կամ ԻնտերնետԲանկ համակարգով ներկայացնելու դեպքում.

3.11.1. ԳԲ աշխատակիցը ստուգում է Հայտը ներկայացնող անձի լիազորությունները, Հայտի լրացման ճշտությունն ու ամբողջականությունը, ինչպես նաև տվյալ Ներդրողի համապատասխան Դեպո հաշիվներում առկա Պարտատոմսերի բավարարությունը, որից հետո համաձայնեցնում է Հայտի էական պայմանները ՆԴ պատասխանատու աշխատակցի հետ: Եթե Հայտն ամբողջական լրացված չէ կամ լրացված է ոչ ճիշտ, ապա Հայտը չի ընդունվում և վերադարձվում է Ներդրողին կամ ուղարկվում է հաղորդագրություն մերժման մասին՝ նշելով պատճառը:

3.11.2. Թղթային տարբերակով Հայտը համարվում է ընդունված ԳԲ աշխատակցի կողմից Հայտի վրա այն ընդունելու մասին նշում կատարելուց և ստորագրելուց հետո: Ընդ որում «ընդունված է» նշագրումով և ԳԲ աշխատակցի ստորագրությամբ օրինակը վերադարձվում է Ներդրողին կամ վերջինիս կողմից լիազորված անձին: Հայտերի վրա նշվում է նաև Հայտի ընդունման ժամը և ամսաթիվը: Հայտի բնօրինակը մնում է ԳԲ աշխատակցի մոտ: ԻնտերնետԲանկ համակարգով ընդունված Հայտի բոլոր տվյալների համապատասխանության դեպքում Ներդրողին ուղարկվում է Հայտի ընդունման մասին հաղորդագրություն, իսկ Հայտի լուսապատճենը պահպանում է համապատասխան էլեկտրոնային թղթապանակում: Հայտի

ընդունումից հետո ԳԲ աշխատակիցը համապատասխան չափով սառեցնում է Հաճախորդի դեպո հաշիվը:

3.11.3. Տվյալ Աճուրդի համար ՀՖԲ-ի կողմից սահմանված Հայտերի ընդունման վերջնաժամկետից առնվազն 15 րոպե առաջ ԳԲ աշխատակիցը Հայտի լուսապատճենը Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով ուղարկում է ՆԴ պատասխանատու աշխատակցին:

3.12. Էլեկտրոնային կապի միջոցով ստացված ստորագրված Հայտերն ընդունվում են բացառիկ դեպքերում Հաճախորդի՝ Բանկում գրանցված էլեկտրոնային հասցեից: Այդ դեպքում ԳԲ աշխատակիցը զանգահարում է հաճախորդին ձայնագրվող հեռախոսով և ճշտում պատվերի տրամադրման փաստը և վավերապայմանները:

3.13. Ընդունված Հայտերը տվյալ Աճուրդի անցկացման օրվա Հայտերի ընդունման վերջնաժամկետից առնվազն 5 րոպե առաջ ՆԴ պատասխանատու աշխատակցի կողմից մուտքագրվում են համակարգում ՀՖԲ-ի կողմից սահմանված ֆորմատներով կամ տրամադրվում են Գործակալին՝ վերջինիս հետ կնքված պայմանագրի համաձայն:

3.14. Աճուրդի անցկացման օրը ՆԴ պատասխանատու աշխատակիցը ՀՖԲ կայք էջից կամ Գործակալից ստանում է Հայտի ընդունման ծանուցումը և Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով վերջինիս լուսապատճենն ուղարկում Բանկի Գլխավոր հաշվապահին և ՀՀԴ աշխատակցին:

3.15. ՀՀԴ աշխատակիցը BankMail համակարգով իրականացնում է արժեթղթերի փոխանցում Գործակալի հաշվին:

3.16. Աճուրդի պաշտոնական արդյունքները ՀՖԲ-ի պաշտոնական կայքի կամ CBANet համակարգի միջոցով ստանալուց հետո ՆԴ պատասխանատու աշխատակիցը Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով վերջինիս լուսապատճենն ուղարկում է ՀՍԴ ղեկավարին և Գլխավոր հաշվապահին: Հայտի մերժման դեպքում արժեթղթերը վերադարձվում են:

3.17. Աճուրդի պաշտոնական արդյունքների հիման վրա ՆԴ պատասխանատու աշխատակիցը պատրաստում է Ներդրողների կողմից ներկայացված և Աճուրդի արդյունքներով բավարարված և/կամ մերժված Հայտերի վերաբերյալ տեղեկանք (Հավելված 1*), որը ստուգվում և ստորագրվում է ՆԴ ղեկավարի կամ ՆԴ ղեկավարի տեղակալի կողմից: Տեղեկանքի բնօրինակը մնում է ՆԴ-ում՝ համապատասխան թղթապանակում, իսկ վերջինիս լուսապատճենը Բանկի ներքին էլեկտրոնային համակարգի միջոցով ՆԴ պատասխանատու աշխատակիցը ուղարկում է ՀՀԴ աշխատակցին և ՀՍԴ, ԳԲ և ՀԲ ղեկավարներին:

3.18. ՀՀԴ աշխատակիցը, BankMail-ով ստանալով վաճառված արժեթղթերի գումարը. կրեդիտագրում է այն տարանցիկ հաշվին:

3.19. Ներկայացված տեղեկանքի հիման վրա ԳԲ աշխատակիցը կատարում է համապատասխան ձևակերպումներ:

3.19.1. Հայտի բավարարման կամ մասնակի բավարարման (մրցակցային առաջարկությունների ներկայացմամբ հետգնման դեպքում) դեպքում ԳԲ աշխատակիցը Աճուրդի անցկացման օրվան հաջորդող աշխատանքային օրը տարանցիկ հաշվից Ներդրողի համապատասխան դրամային հաշվին փոխանցում է տեղեկանքում նշված (բավարարված) գումարը՝ հանած Բանկի կողմից գանձվող միջնորդավճարները, իսկ Ներդրողի համապատասխան Դեպո հաշվից ելքագրում է Աճուրդի ընթացքում վաճառված Պարտատոմսերը: Հայտի

մասնակի բավարարման դեպքում ԳԲ աշխատակիցը մինչև Աճուրդի անցկացման օրվա ավարտը նաև ապասառեցնում է Ներդրողի Դեպո հաշվում առկա Պարտատոմսերը Աճուրդին ներկայացված Հայտի մերժված ծավալի չափով: Այն դեպքում, երբ բավարարված կամ մասնակի բավարարված հայտի առարկա հանդիսացող պարտատոմսերը որևէ կերպ ծանրաբեռնված են /սույն ընթացակարգի 3.10.2 կետ/, իրականացվում են փոխադարձ պարտավորությունների հաշվանցման (նեթինգի) միջոցով և, անհրաժեշտության դեպքում, նաև նոր ռեպո համաձայնագրի կնքմամբ:

3.19.2. Հայտի մերժման դեպքում ԳԲ աշխատակիցը ապասառեցնում է Ներդրողի Դեպո հաշվում առկա Պարտատոմսերը:

3.20. Սույն ակտի 3.15. կետով սահմանված տեղեկանքը ստանալուց հետո ԳԲ աշխատակիցը կազմում է Հայտի բավարարման (մասնակի բավարարման) կամ մերժման հաղորդագրություն (Հավելված 1.2), որը ստորագրվում է ՀՍԴ ղեկավարի տեղակալի և/կամ ԳԲ պետի կողմից, և տրամադրում է Ներդրողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

3.21. Աճուրդին հաջորդող բանկային օրը ՀԲ և ՀՀԴ աշխատակիցները պարտավոր են համադրել ՀՀ կենտրոնական բանկից ստացված քաղվածքների և տեղեկանքների տվյալների համապատասխանությունը Բանկում եղած տվյալների հետ:

3.22. ՆԴ աշխատակիցը յուրաքանչյուր ուրբաթ համադրում է ՀՀ կենտրոնական բանկից ստացված քաղվածքների համապատասխանությունը Բանկում եղած դեպո հաշիվների տվյալների հետ:

3.23. Սույն գլխի շրջանակներում Հաճախորդի մոտ դրամական միջոցների գծով պարտավորությունների առաջացման դեպքում Բանկի և Ներդրողի միջև միաժամանակ կնքվում է Ռեպո համաձայնագիր: Ռեպո համաձայնագրի կնքմամբ Բանկի կողմից իրականացվում է Հաճախորդի կողմից պարտատոմսերի ձեռք բերման ենթակա չբավարարող գումարային մասի ֆինանսավորում, Հաճախորդի կողմից ներկայացված հայտի բավարարված մասի գումարային ծավալի նվազագույնը տասը տոկոսի չափով գումարի ապահովման պայմանով:

3.24. Ռեպո համաձայնագրի կնքումը տեղի է ունենում սույն ընթացակարգի 5-րդ գլխով սահմանված կարգով:

4. ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

4.1. Պետական պարտատոմսերի շրջանառությունը երկրորդային շուկայում վերջիններիս օտարման հատուցելի և անհատույց գործարքների իրականացումն է:

4.2. Ներդրողների հետ Պարտատոմսերի առք ու վաճառքի գործարքներն իրականացվում են համապատասխան պայմանագրի կնքմամբ (դիլերային գործարք):

4.2.1. Առք ու վաճառքի պայմանագրի կնքմամբ գործարքներն իրականացվում են պայմանագրում նշված Պարտատոմսերի առք ու վաճառքի նախապես համաձայնեցված էական պայմանների համաձայն: Առք ու վաճառքի գործարքների առարկա կարող են հանդիսանալ միայն այն Պարտատոմսերը, որոնց նկատմամբ դրանց սեփականատիրոջ իրավունքները սահմանափակված չեն:

4.3. Ներդրողների հետ պայմանագրի վրա հիմնված առք ու վաճառքի գործարքներն իրականացվում են հետևյալ ընթացակարգով.

4.3.1. Գործարքի հակառակ կողմի հետ գործարքի էական պայմանները համաձայնեցնելուց հետո ՆԴ պատասխանատու աշխատակիցը կազմում է Պարտատոմսերի առք ու վաճառքի պայմանագիրն երկու օրինակից (Հավելված 2): Այնուհետև ՆԴ ղեկավարի տեղակալը և ՆԴ ղեկավարը ստուգանշում են այն և ներկայացնում ստորագրման Գործադիր տնօրենին կամ նման իրավասություն ունեցող Բանկի այլ պաշտոնատար անձին: Եթե պայմանագիրը կազմում է հակառակ կողմը, ապա ՆԴ պատասխանատու աշխատակիցը ստուգում է CBANet համակարգով ստացված պայմանագիրը, այնուհետև ՆԴ ղեկավարի տեղակալը և ՆԴ ղեկավարը ստուգանշում են այն և ներկայացնում ստորագրման Գործադիր տնօրենին կամ նման իրավասություն ունեցող Բանկի այլ պաշտոնատար անձին:

4.3.2. Այնուհետև ստորագրված և կնքված պայմանագիրը ներկայացվում է հակառակ կողմին՝ պատշաճ կերպով վավերացման կամ CBANet համակարգով ուղարկվում է հակառակ կողմին (այն դեպքում, երբ հակառակ կողմը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ բանկ):

4.3.3. Երկրորդ կողմից ստանալով պատշաճ կերպով ստորագրված և կնքված Պայմանագրի բնօրինակը կամ CBANet համակարգով ստացված լուսապատճենը՝ ՆԴ պատասխանատու աշխատակիցն իրականացնում է համապատասխան ձևակերպումները Ծրագրային Համակարգում, որը հաստատվում է ՆԴ ղեկավարի տեղակալի կամ ՆԴ ղեկավարի կողմից:

4.3.4. ՆԴ ղեկավարի տեղակալի կամ ՆԴ ղեկավարի կողմից տվյալ ձևակերպումը հաստատվելուց հետո ՆԴ պատասխանատու աշխատակիցն ՀՀԴ աշխատակցին է ներկայացնում երկրորդ կողմից ստացված պատշաճ կերպով ստորագրված և կնքված Պայմանագրի բնօրինակը կամ CBANet համակարգով ստացված օրինակը՝ համապատասխան հաշվապահական ձևակերպումներն իրականացնելու համար, իսկ լուսապատճենը պահվում է ՆԴ-ում՝ համապատասխան էլեկտրոնային թղթապանակում:

4.3.5. Անհրաժեշտության դեպքում ՀՀ ռեզիդենտ բանկերի հետ CBANet համակարգով փոխանակված պայմանագրերի բնօրինակները մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը Բանկի կողմից ուղարկվում են գործարքի երկրորդ կողմին: Վերջինիս իրավասու պաշտոնատար անձի կողմից ստորագրված և կնքված բնօրինակի մեկ օրինակը ստանալուց հետո ՆԴ պատասխանատու աշխատակիցը տրամադրում է այն Գլխավոր հաշվապահին կամ ՀՀԴ աշխատակցին: Վերջինիս կողմից Պայմանագրի բնօրինակի ստացման փաստը հավաստվում է ՆԴ կողմից վարվող հատուկ հաշվառման մատյանում:

4.4. Այն դեպքում, երբ սույն կետում նշված առք ու վաճառքի գործարքների կնքման ժամանակ Բանկը հանդես է գալիս վաճառողի դերում, նշված պայմանագրերը կարող են կնքվել նաև երկրորդ կողմի կողմից ձեռք բերվող ակտիվի համար նախատեսված գումարի 10.00% /տասը տոկոս/ չափով գումարի ապահովմամբ:

4.4.1. Այդ դեպքում Ներդրողի մոտ առաջանում է դրամական միջոցների գծով պարտավորություն Բանկի նկատմամբ:

4.4.2. Հաճախորդի մոտ դրամական միջոցների գծով պարտավորությունների առաջացման դեպքում Բանկի և Ներդրողի միջև միաժամանակ կնքվում է Ռեպո համաձայնագիր: Ռեպո համաձայնագրի կնքմամբ Բանկի կողմից իրականացվում է Հաճախորդի կողմից պարտատոմսերի ձեռք բերման ենթակա չբավարարող

գումարային մասի ֆինանսավորում, Հաճախորդի կողմից առք ու վաճառքի պայմանագրով նախատեսված գումարային ծավալի նվազագույնը տասը տոկոսի չափով գումարի ապահովման պայմանով:

4.4.3. Ռեպո համաձայնագրի կնքումը տեղի է ունենում սույն ընթացակարգի 5-րդ գլխով սահմանված կարգով:

5. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐՈՎ ՌԵՊՈ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Ռեպո/հակադարձ ռեպո գործարքների առարկա կարող են հանդիսանալ միայն այն Պարտատոմսերը, որոնց նկատմամբ դրանց սեփականատիրոջ իրավունքները սահմանափակված չեն (ազատ արժեթղթերի կարգավիճակով դեպո հաշվում առկա Պարտատոմսերը):

5.2. Բանկն իրականացնում է ռեպո և հակադարձ ռեպո գործառնություններ ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ ռեզիդենտ առևտրային բանկերի հետ, ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների և իր հաճախորդների հետ:

5.3. ՀՀ կենտրոնական բանկի հետ Ռեպո/հակադարձ ռեպո գործարքներն իրականացվում են համաձայն Բանկի և ՀՀ կենտրոնական բանկի միջև Ռեպո և Հակադարձ ռեպո գործարքների կնքման Գլխավոր համաձայնագրի:

5.4. Գործարքի կնքումից առաջ ՆԴ ղեկավարը որոշում է գործարքի անհրաժեշտ ծավալը՝ ելնելով Բանկի իրացվելիությունից, շուկայում առկա իրավիճակից, պարտադիր պահուստավորման ապահովման անհրաժեշտությունից և ներքին սահմանաչափերից, ստորագրում է գործարքի պայմանները պարունակող փաստաթուղթը և տրամադրում ՆԴ աշխատակցին:

5.5. ՆԴ աշխատակիցը մուտքագրում է գործարքի պայմանները ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված ծրագրային համակարգ:

5.6. ՀՀԴ աշխատակիցն BankMail համակարգով իրականացնում է գումարի և արժեթղթերի շարժերը:

5.7. ՀՀ ԿԲ-ի համակարգում տեսնելով հայտի հաստատումները՝ ՆԴ պատասխանատու աշխատակիցն մուտքագրում է տվյալները Ծրագրային համակարգում, որը հաստատվում է ՆԴ ղեկավարի տեղակալի կամ ՆԴ ղեկավարի կողմից: Տվյալ ձևակերպման հաստատումից հետո ՀՀԴ աշխատակիցն իրականացնում է համապատասխան հաշվապահական ձևակերպումները BankMail համակարգով համապատասխան հավաստումը հաղորդագրությամբ ստանալուց և համադրելուց հետո: Անհրաժեշտության դեպքում ՆԴ-ն միջգրասենյակային հուշագրով ներկայացնում է նեթթինգի վերաբերյալ տվյալներ:

5.8. Ռեզիդենտ Բանկի հետ ռեպո գործարքի կնքման էական պայմանները համաձայնեցնելուց հետո ՆԴ պատասխանատու աշխատակիցը կազմում է Ռեպո համաձայնագիր երկու օրինակից (Հավելված 3): Այնուհետև ՆԴ ղեկավարի տեղակալը և ՆԴ ղեկավարը նշագրում են այն և ներկայացնում ստորագրման Գործադիր տնօրենին կամ նման իրավասություն ունեցող Բանկի այլ պաշտոնատար անձին: Եթե պայմանագիրը կազմում է հակառակ կողմը, ապա ՆԴ պատասխանատու աշխատակիցը ստուգում է ֆաքսիմիլային կապով ստացված պայմանագիրը, այնուհետև ՆԴ ղեկավարի տեղակալը և ՆԴ ղեկավարը նշագրում են այն և ներկայացնում ստորագրման Գործադիր տնօրենին կամ նման իրավասություն ունեցող Բանկի այլ պաշտոնատար անձին:

5.8.1. Այնուհետև ստորագրված և կնքված Ռեպո համաձայնագիրը CBANet համակարգի միջոցով ներկայացվում է հակառակ կողմին՝ պատշաճ կերպով կնքման և ստորագրման:

5.8.2. Երկրորդ կողմից ստանալով պատշաճ կերպով ստորագրված և կնքված Ռեպո Համաձայնագրի լուսապատճենը՝ ՆԴ պատասխանատու աշխատակիցն իրականացնում է համապատասխան ձևակերպումները Ծրագրային Համակարգում, որը հաստատվում է ՆԴ ղեկավարի տեղակալի կամ ՆԴ ղեկավարի կողմից:

5.8.3. ՆԴ ղեկավարի տեղակալի կամ ՆԴ ղեկավարի կողմից տվյալ ձևակերպումը հաստատվելուց հետո ՆԴ պատասխանատու աշխատակիցը Գլխավոր հաշվապահին կամ ՀՀԴ աշխատակցին է ներկայացնում երկրորդ կողմից ստացված պատշաճ կերպով ստորագրված և կնքված Ռեպո համաձայնագրի լուսապատճենը՝ համապատասխան հաշվապահական ձևակերպումներն իրականացնելու համար: Լուսապատճենը պահվում է ՆԴ-ում՝ համապատասխան էլեկտրոնային թղթապանակում: Անհրաժեշտության դեպքում բնօրինակը փոխանակելիս Գլխավոր հաշվապահի կամ ՀՀԴ աշխատակցի կողմից պայմանագրի բնօրինակի ստացման փաստը հավաստվում է ՆԴ կողմից վարվող հատուկ հաշվառման մատյանում:

5.9. Բանկի հաճախորդների և ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների հետ Ռեպո/հակադարձ ռեպո գործարքներն իրականացվում են հետևյալ ընթացակարգով.

5.9.1. Գործարքի հակառակ կողմի հետ գործարքի էական պայմանները համաձայնեցնելուց հետո ՆԴ պատասխանատու աշխատակիցը կազմում է Ռեպո համաձայնագիրը երկու օրինակից (Հավելված 3*): Այնուհետև ՆԴ ղեկավարի տեղակալը և ՆԴ ղեկավարը ստուգանշում են այն և ներկայացնում ստորագրման Գործադիր տնօրենին կամ նման իրավասություն ունեցող Բանկի այլ պաշտոնատար անձին, որից հետո այն տրամադրվում է ԳԲ աշխատակցին:

5.9.2. Այնուհետև ստորագրված և կնքված Ռեպո համաձայնագիրը ԳԲ աշխատակիցը ներկայացնում է հակառակ կողմին՝ պատշաճ կերպով կնքման (եթե երկրորդ կողմը իրավաբանական անձ է) և ստորագրման, այնուհետև Բանկի ներքին էլեկտրոնային համակարգով պայմանագրի լուսապատճենն ուղարկում է ՆԴ, ՀԲ և ՀՀԴ աշխատակիցներին: Պայմանագրի բնօրինակը պահպանվում է ՀԲ բաժնում, իսկ լուսապատճենը պահվում է ՆԴ-ում՝ համապատասխան էլեկտրոնային թղթապանակում:

5.9.3. Ռեպո համաձայնագիրը ԳԲ աշխատակցի կողմից Հաճախորդին ստորագրման կարող է ներկայացվել նաև ԻնտերնետԲանկ համակարգի միջոցով: ԻնտերնետԲանկ համակարգով ստանալով Հաճախորդի կողմից ստորագրված համաձայնագրի լուսապատճենը՝ ԳԲ աշխատակիցը Բանկի ներքին էլեկտրոնային համակարգով այն ուղարկում է ՆԴ, ՀԲ և ՀՀԴ աշխատակիցներին:

5.9.4. Ստանալով պատշաճ կերպով ստորագրված և կնքված Ռեպո համաձայնագրի լուսապատճենը՝ ՆԴ պատասխանատու աշխատակիցն իրականացնում է համապատասխան ձևակերպումները Ծրագրային համակարգում, որը հաստատվում է ՆԴ ղեկավարի տեղակալի կամ ՆԴ ղեկավարի կողմից:

5.9.5. Ծրագրային համակարգում տեսնելով ՆԴ ղեկավարի կամ ՆԴ ղեկավարի տեղակալի հաստատումը՝ ՀՀԴ աշխատակիցները BankMail-ով ձևավորում և հաստատում են

համապատասխան հաղորդագրությունները: Արժեթղթերի միջբանկային շարժի դեպքում BankMail-ով ստանալով արժեթղթերի հաշվառման վերաբերյալ հավաստումը՝ ՀԲ աշխատակիցը ծրագրային համակարգում իրականացնում է հաճախորդի դեպո հաշիվներից համապատասխան արժեթղթերի ելք/մուտք և գումարի տրամադրում/ստացում: Գործարքները հաստատվում են ՀԲ մեկ այլ աշխատակցի կողմից:

5.9.6. Այն դեպքում, երբ Ռեպո գործարքի առարկա հանդիսացող պարտատոմսերը հաշվառվում են Բանկում վարվող Ներդրողի համապատասխան դեպո հաշվում, Ներդրողը լիազորում է բանկին գանձել արժեթղթերը իր դեպո հաշվից դեպի Բանկի՝ Պահառուի մոտ վարվող համապատասխան դեպո հաշիվ:

5.9.7. Այն դեպքում, երբ նույն օրվա կատարմամբ միևնույն Ներդրողի հետ առկա է մեկից ավելի գործարքներ, ապա ՆԴ պատասխանատու աշխատակիցը լրացնում է փոխադարձ պարտավորությունների հաշվանցման (նեթինգի) հայտը (Հավելված 3.1), որի պատշաճ կերպով ստորագրված թղթային օրինակի էլեկտրոնային լուսապատճենը էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացնում է Համադրման բաժնի և ՀՀԴ պատասխանատու աշխատակիցներին: Արժեթղթերի և գումարների շարժը իրականացվում է Նեթինգ հայտի հիման վրա, որի բնօրինակը պահվում է ՆԴ-ում՝ համապատասխան թղթապանակում:

5.10. Բանկը կարող է ՀՀ ռեզիդենտ առևտրային բանկերի, ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների և իր հաճախորդների հետ իրականացնել նաև արտարժույթով Ռեպո/հակադարձ ռեպո գործարքներ: Ընդ որում արտարժույթով Ռեպո/հակադարձ ռեպո գործարքի գումարի արտարժութային համարժեքը հաշվարկվում է գործարքի կնքման պահին գործող Բանկի կողմից սահմանված տվյալ արտարժույթի վաճառքի փոխարժեքով:

5.11. Սույն գլխի շրջանակներում Ռեպո/հակադարձ ռեպո գործարքների մասով Պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը գործարքի մասնակիցների միջև իրականացվում է միայն «առաքում վճարման դիմաց» սկզբունքով: Առանձին դեպքերում սեփականության իրավունքի փոխանցումը կարող է իրականացվել «ազատ առաքում» սկզբունքով՝ Գործադիր տնօրենի հատուկ թույլտվությամբ:

5.12. Սույն գլխի շրջանակներում Ռեպո/հակադարձ ռեպո գործարքների առարկա հանդիսացող պարտատոմսերի գնահատումն /այն դեպքում, երբ Բանկը հանդես է գալիս որպես գնորդ/ իրականացվում է տվյալ գործառնության օրվան նախորդող օրը ՀՀ ԿԲ կողմից հրապարակված **«ՀՀ ԿԲ հետ ռեպո գործառնությունների համար ընդունելի արժեթղթերի ցանկը, գները և մինչև մարում եկամտաբերությունները»** փաստաթղթում ներառված տեղեկատվության հիման վրա: Ընդ որում գնահատումը տեղի է ունենում հետևյալ կերպ.

5.13. ա. Գնվող ակտիվի և Ռեպո գումարի արժույթների համընկման դեպքում՝ տվյալ տրանշի համար գործող մինչև մարում եկամտաբերությանը գումարվում է 0.75 /յոթանասունհինգ հարյուրերորդական/ տոկոսային կետ,

5.14. բ. Գնվող ակտիվի և Ռեպո գումարի արժույթների չհամընկման դեպքում՝ տվյալ տրանշի համար գործող մինչև մարում եկամտաբերությանը գումարվում է 1.00 /մեկ/ տոկոսային կետ:

5.15. Սույն ընթացակարգի 3-րդ և 4-րդ գլուխներով սահմանված դեպքերում Ռեպո համաձայնագրի կնքմամբ Բանկի կողմից իրականացվում է Հաճախորդի կողմից պարտատոմսերի ձեռք բերման ենթակա չբավարարող գումարային մասի ֆինանսավորում,

Հաճախորդի կողմից իրականացվող գործարքի համար նախատեսված գումարային ծավալի նվազագույնը տասը տոկոսի չափով գումարի ապահովման պայմանով:

5.16. Բանկն իր հաճախորդների համալիր սպասարկման արդյունավետության բարձրացման նպատակով Ռեպո համաձայնագրի մարման օրը կարող է Ռեպո համաձայնագրի առարկա հանդիսացող արժեթղթերի մուտքն ապահովել տվյալ հաճախորդի Բանկում բացված դեպո հաշվին, տվյալ պարտատոմսերն ամբողջությամբ վաճառելու Հաճախորդի կողմից ներկայացված Բրոքերային հայտի առկայության պայմանով: Տվյալ պարտատոմսերի վաճառքի /մասնակի կամ ամբողջությամբ/ իրականացումից հետո հաշվարկներն իրականացվում են փոխադարձ պարտավորությունների հաշվանցման (նեթինգի) միջոցով և, անհրաժեշտության դեպքում, նաև նոր ռեպո համաձայնագրի կնքմամբ:

5.17. ՆԴ աշխատակիցը ուսումնասիրում է հաճախորդներին տրամադրված ռեպո համաձայնագրերը և ՆԴ տնօրենին ներկայացնում է տեղեկատվություն հաճախորդների կողմից ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերի գների՝ ռեպո գումարից նվազելու վերաբերյալ: ՌԿՀԱԴ աշխատակիցը վերահսկողություն է իրականացնում այդ գործընթացի վերաբերյալ և տեղեկատվություն է ներկայացնում ՌԿՀԱԴ և ՆԴ ղեկավարներին: Ուսումնասիրությունը և վերահսկողությունը իրականացվում է օրական կտրվածքով պետական արժեթղթերի և շաբաթական կտրվածքով՝ կորպորատիվ և արտասահմանյան արժեթղթերի համար:

5.18. ՀՀ կենտրոնական բանկի և ռեզիդենտ բանկերի հետ ռեպո/հակադարձ ռեպո գործարքի մարման օրը ՀՀԴ աշխատակիցը BankMail-ով իրականացնում է գումարի/արժեթղթերի շարժ և BankMail-ով գործարքի հավաստումը ստանալուց հետո Ծրագրային համակարգում կատարում է պայմանագրի մարում: ՀՀԴ հաստատողը հաստատում է գործարքները:

5.19. Բանկի հաճախորդների և ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների հետ ռեպո/հակադարձ ռեպո գործարքի մարման օրը ՆԴ աշխատակիցը ՀԲ և ՀՀԴ աշխատակիցներին տեղեկացնում է գործարքի մարման մասին, որի հիման վրա ՀՀԴ աշխատակիցներն իրականացնում են BankMail-ով համապատասխան հաղորդագրությունների ձևավորում և հաստատում: ՀԲ աշխատակիցը ստուգում է հաճախորդի հաշվին գումարի առկայությունը, ծրագրային համակարգում մարում է պայմանագիրը և, միջբանկային շարժի դեպքում BankMail-ով հավաստումը ստանալուց հետո, հաճախորդի դեպո հաշիվներից իրականացնում է համապատասխան արժեթղթերի ելք/մուտք: ՀԲ հաստատողը հաստատում է գործարքները:

6. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ, ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԳՆԱՆՇՎՈՂ և ԹՈՂԱՐԿՎԱԾ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՄԲ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

6.1. Բանկը տրամադրում է սույն ընթացակարգով սահմանված վարկը այն ՀՀ ռեզիդենտ առևտրային բանկերին, ոչ բանկ ֆինանսական կազմակերպություններին և իր հաճախորդ-ներին, որոնք տիրապետում են պետական պարտատոմսերի, Բանկի կողմից գնանշվող և թողարկված Կորպորատիվ արժեթղթերին:

6.2. Սույն ընթացակարգով սահմանված վարկի գծով գրավի առարկա կարող են հանդիսանալ պետական պարտատոմսերը, Բանկի կողմից գնանշվող և թողարկված բոլոր արժույթներով Կորպորատիվ արժեթղթերը:

6.3. Ռեզիդենտ Բանկի հետ վարկի տրամադրման էական պայմանները համաձայնեցնելուց հետո ՆԴ պատասխանատու աշխատակիցը կազմում է վարկային և գրավի պայմանագրեր երկու օրինակից (Հավելված 4 և 5): Այնուհետև ՆԴ ղեկավարի տեղակալը և ՆԴ ղեկավարը ստուգանշում են այն և ներկայացնում ստորագրման և կնքման Գործադիր տնօրենին կամ նման իրավասություն ունեցող Բանկի այլ պաշտոնատար անձին:

6.3.1. Այնուհետև ստորագրված և կնքված վարկային և գրավի պայմանագրերը ֆաքսիմիլային կապի կամ CBANet համակարգի միջոցով ներկայացվում է հակառակ կողմին՝ պատշաճ կերպով կնքման և ստորագրման:

6.3.2. Երկրորդ կողմից ստանալով պատշաճ կերպով ստորագրված և կնքված է վարկային և գրավի պայմանագրերը՝ ՆԴ պատասխանատու աշխատակիցն իրականացնում է համապատասխան ձևակերպումները Ծրագրային Համակարգում, որը հաստատվում ՆԴ ղեկավարի տեղակալի կամ ՆԴ ղեկավարի կողմից:

6.3.3. ՆԴ ղեկավարի տեղակալի կամ ՆԴ ղեկավարի կողմից տվյալ ձևակերպումը հաստատվելուց հետո ՆԴ պատասխանատու աշխատակիցը Գլխավոր հաշվապահին կամ ՀՀԴ աշխատակցին է ներկայացնում երկրորդ կողմից ստացված պատշաճ կերպով ստորագրված և կնքված վարկային և գրավի պայմանագրերի օրինակները՝ համապատասխան հաշվապահական ձևակերպումներն իրականացնելու համար, իսկ լուսապատճենը պահվում է ՆԴ-ում՝ համապատասխան էլեկտրոնային թղթապանակում: Գլխավոր հաշվապահի կամ ՀՀԴ աշխատակցի կողմից պայմանագրի բնօրինակի ստացման փաստը հավաստվում է ՆԴ կողմից վարվող հատուկ հաշվառման մատյանում:

6.4. Բանկի հաճախորդների և ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների հետ Վարկի տրամադրումը իրականացվում է հետևյալ ընթացակարգով.

6.4.1. Գործարքի հակառակ կողմի հետ գործարքի էական պայմանները համաձայնեց-նելուց հետո ՆԴ պատասխանատու աշխատակիցը կազմում է վարկային և գրավի պայմանագրեր երկու օրինակից (Հավելված 4 և 5): Այնուհետև ՆԴ ղեկավարի տե-ղակալը և ՆԴ ղեկավարը ստուգանշում են այն և ներկայացնում կնքման և ստո-րագրման Գործադիր տնօրենին կամ նման իրավասություն ունեցող Բանկի այլ պաշտոնատար անձին, որից հետո այն տրամադրվում է ԳԲ աշխատակցին:

6.4.2. Ստորագրված և կնքված վարկային և գրավի պայմանագրերը ԳԲ աշխատակիցը ներկայացնում է հակառակ կողմին՝ պատշաճ կերպով ստորագրման և կնքման (եթե երկրորդ կողմը իրավաբանական անձ է) , այնուհետև Բանկի ներքին էլեկտրոնային համակարգով պայմանագրերի լուսապատճենները ուղարկում է ՆԴ, ՀԲ և ՀՀԴ աշխատակիցներին: Պայմանագրի բնօրինակը պահպանվում է ՀԲ բաժնում, իսկ լուսապատճենը պահվում է ՆԴ-ում՝ համապատասխան էլեկտրոնային թղթապանակում:

6.4.3. Վարկային և գրավի պայմանագրերը ԳԲ աշխատակցի կողմից Հաճախորդին ստորագրման կարող է ներկայացվել նաև ԻնտերնետԲանկ համակարգի միջոցով: ԻնտերնետԲանկ համակարգով ստանալով Հաճախորդի կողմից ստորագրված պայմանագրերի լուսապատճենները՝ ԳԲ աշխատակիցը Բանկի ներքին էլեկտրոնային համակարգով այն ուղարկում է ՆԴ, ՀԲ և ՀՀԴ աշխատակիցներին:

6.4.4. Ստանալով պատշաճ կերպով ստորագրված և կնքված վարկային և գրավի պայմանագրերի լուսապատճենները՝ ՆԴ պատասխանատու աշխատակիցն

իրականացնում է համապատասխան մուտքագրումները Ծրագրային համակարգում, որը հաստատվում է ՆԴ ղեկավարի տեղակալի կամ ՆԴ ղեկավարի կողմից:

6.4.5. Ծրագրային համակարգում տեսնելով ՆԴ ղեկավարի կամ ՆԴ ղեկավարի տեղակալի հաստատումը՝ պետական արժեթղթերի դեպքում ՀՀՊ աշխատակիցները BankMail-ով ձևավորում և հաստատում են համապատասխան հաղորդագրությունները:

6.4.6. ՀԲ աշխատակիցն իրականացնում է վարկի գումարի տրամադրում և արժեթղթի գրավադրում Ծրագրային համակարգում: Այն դեպքում, երբ գրավի առարկա հանդիսացող պարտատոմսերը հաշվառվում են Բանկում վարվող Ներդրողի համապատասխան դեպո հաշվում, ապա արժեթղթերը սառեցվում են (գրավադրվում են) Գրավատուի՝ Բանկում սպասարկվող դեպո հաշվին: Գրավադրումը հաստատվում է ՆԴ աշխատակցի կողմից, իսկ ՀԲ հաստատողը հաստատում է գործարքները:

6.4.7. Եթե Ներդրողի հաշիվները վարվում են այլ բանկում, ապա վերջինս պարտավորվում է գրավի առարկա հանդիսացող պարտատոմսերը գրավադնել ի օգուտ Բանկի՝ ՀԿԴ-ում բացված սեփական արժեթղթերի հաշվին: Այդ դեպքում ՆԴ կողմից Ծրագրային համակարգում վարկային պայմանագիրը հաստատվում է՝ ի օգուտ Բանկի համապատասխան արժեթղթերի գրավադրման մասին համապատասխան պահառուի կողմից հավաստումը ստանալուց հետո: ՀԲ աշխատակիցը Depend համակարգով ստուգում է արժեթղթի գրավադրման փաստը և հաստատում է գործարքը:

6.5. Վարկի առարկա հանդիսացող պարտատոմսերի գնահատումն իրականացվում է ստորև նշված սկզբունքների հիման վրա՝

6.5.1. տվյալ գործառնության օրվան նախորդող օրը ՀՀ ԿԲ կողմից հրապարակված «ՀՀ ԿԲ հետ ռեպո գործառնությունների համար ընդունելի արժեթղթերի ցանկը, գները և մինչև մարում եկամտաբերությունները» փաստաթղթում ներառված տեղեկատվության հիման վրա պետական պարտատոմսերի դեպքում,

6.5.2. Բանկի կողմից տվյալ օրվա սահմանված առքի եկամտաբերությամբ՝ Բանկի կողմից *գնանշվող* պարտատոմսերի պարագայում, և

6.5.3. արժեկտրոնային եկամտաբերությամբ՝ Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի դեպքում,

ընդ որում տվյալ տրանշի համար գործող մինչև մարում եկամտաբերությանը գումարվում են ստորև նշված տոկոսային կետերը:

	Գնվող արժեթղթի և ռեպո գումարի արժույթների համընկման դեպքում	Գնվող արժեթղթի և ռեպո գումարի արժույթների չհամընկման դեպքում
Պետական պարտատոմսերի դեպքում	0.75	1.00
Բանկի կողմից գնանշվող պարտատոմսերի դեպքում	1.00	1.25
Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի դեպքում	0	0.25

6.6. Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում Ներդրողի կողմից Բանկ ներկայացված արժեթղթերի՝ /սույն գլխի դրույթներով նախատեսված արժեթղթերի,

ինչպես նաև Պետական պարտատոմսերի պարագայում/ կարգավորվող շուկայից ձեռք բերելու հայտի առկայության դեպքում, Ներդրողին կարող է տրամադրվել լրացուցիչ ֆինանսավորում: Տվյալ դեպքում, մինչև հայտ ներկայացնելը, Ներդրողը պարտավոր է Բանկում սպասարկվող իր համապատասխան հաշվին ապահովել՝

6.6.1. հայտում նշված գործարքի գումարի նվազագույնը 20 /քսան/ տոկոսի չափով գումար /ներառյալ համապատասխան միջնորդավճարները/ կորպորատիվ պարտատոմսերի պարագայում:

6.6.2. հայտում նշված գործարքի գումարի նվազագույնը 10 /տասը/ տոկոսի չափով գումար /ներառյալ համապատասխան միջնորդավճարները/ Պետական պարտատոմսերի պարագայում:

6.7. 6.6 կետով սահմանված դեպքերում Ներդրողի մոտ առաջանում է դրամական միջոցների գծով պարտավորություն Բանկի նկատմամբ:

6.8. Հաճախորդի մոտ դրամական միջոցների գծով պարտավորությունների առաջացման դեպքում Բանկի և Ներդրողի միջև միաժամանակ կնքվում է Վարկային/Ռեպո համաձայնագիր: Վարկային/Ռեպո համաձայնագրի կնքմամբ Բանկի կողմից իրականացվում է Ներդրողի կողմից Արժեթղթերի ձեռք բերման ենթակա չբավարարող գումարային մասի ֆինանսավորում:

6.9. Վարկի մարման օրը վարկառուի հաշվին բավարար միջոցների առկայության պարագայում դրանք անակցեպտ գանձվում են վարկի մարման նպատակով: ՀԲ/ԳԲ բաժնի աշխատակիցը ՀԾ ծրագրային համակարգում մարում է վարկը և ուղարկում հաստատման: ՀԲ հաստատողի կողմից վարկի մարումը հաստատելուց հետո գործարքը հաստատվում է ՆԴ աշխատակցի կողմից: ՀԲ աշխատակիցը կատարում է գրավի վերադարձ, որը հաստատվում է ՀԲ հաստատողի, այնուհետև ՆԴ աշխատակցի կողմից:

6.10. Սույն գլխի շրջանակներում Բանկի հետ կապված անձ /Բանկի հետ կապված անձանց շրջանակը սահմանվում է համաձայն ՀՀ համապատասխան օրենսդրության/ հանդիսացող Ներդրողներին վարկերի տրամադրումն իրականացվում է ՌԿՀԱԴ աշխատակցի ստուգանշմամբ՝ հաշվի առնելով Բանկի հետ կապված անձանց նկատմամբ ՀՀ ԿԲ համապատասխան նորմատիվ իրավական ակտերով ամրագրված պահանջները:

6.11. 6.10 կետում նշված անձանց տրամադրվող վարկերի ընդհանուր սահմանաչափը սահմանվում է Գործադիր տնօրենի կողմից՝ ՌԿՀԱԴ և ՆԴ առաջարկությամբ:

7. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԳՆԱՆՇՎՈՂ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ՌԵՊՈ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

7.1. Ռեպո գործարքների առարկա կարող են հանդիսանալ միայն այն Պարտատոմսերը, որոնց նկատմամբ դրանց սեփականատիրոջ իրավունքները սահմանափակված չեն (ազատ արժեթղթերի կարգավիճակով դեպո հաշվում առկա Պարտատոմսերը):

7.2. Բանկի կողմից գնանշվող Կորպորատիվ արժեթղթերով ռեպո/հակադարձ ռեպո գործարքներն իրականացվում են Բորսայում:

7.3. Ներդրողը Ռեպո/հակադարձ ռեպո գործարք կնքելու նպատակով ԳԲ աշխատակցին ներկայացնում է հայտ (Հավելված 6):

7.4. Ներդրողի կողմից Ռեպո/հակադարձ ռեպո գործարք կնքելու հայտը ստանալուց հետո հաճախորդին պատկանող պարտատոմսերը արգելադրվում են Բորսայում, որից հետո ՆԴ լիազոր աշխատակցի կողմից հայտը տեղադրվում է առևտրային համակարգ: Շուկայի այլ

մասնակիցների կողմից հայտը չբավարարելու դեպքում Բանկը բավարարում է իր հաճախորդների կողմից տրված հայտերը:

7.5. Ռեպո/հակադարձ ռեպո գործարքի առարկա հանդիսացող պարտատոմսերը գնահատվում են Բանկի կողմից տվյալ օրվա սահմանված առքի եկամտաբերությանը գումարած 1% գնվող արժեթղթի և ռեպո գումարի արժույթների համընկման դեպքում և 1.25%՝ գնվող արժեթղթի և ռեպո գումարի արժույթների չհամընկման դեպքում:

7.6. Ռեպո/հակադարձ ռեպո գործարքի կնքման դեպքում ՆԴ աշխատակիցը բորսայից ստացված ռեպո գործարքի կնքման հաստատումը ներկայացնում է ստորագրման ՆԴ ղեկավարին կամ նրա տեղակալին:

7.7. Պատշաճ ձևով ստորագրված Գործարքի հաստատման էլեկտրոնային լուսապատճենը ՆԴ աշխատակիցը Բանկի ներքին էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկում է ՀՄԴ և ՀՀԴ աշխատակիցներին համապատասխան ձևակերպումներ իրականացնելու համար: Գործարքի հաստատման բնօրինակը մնում է Ներդրումային դեպարտամենտում և կարվում է օրվա գործերում:

7.8. Ռեպո/հակադարձ ռեպո գործարքի կնքման դեպքում ՆԴ կողմից տրամադրված գործարքի հաստատման վավերագրի հիման վրա ԳԲ աշխատակիցը Ներդրողին տրամադրում է հայտի բավարարման կամ մասնակի բավարարման հաստատում (Հավելված 7):

8. ԱՐՏԱՄԱՀՄԱՆՅԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

8.1. Ռեպո գործարքների առարկա կարող են հանդիսանալ միայն այն Պարտատոմսերը, որոնց նկատմամբ դրանց սեփականատիրոջ իրավունքները սահմանափակված չեն (ազատ արժեթղթերի կարգավիճակով դեպո հաշվում առկա Պարտատոմսերը):

8.2. Ներդրողը տեղեկացնում է ՆԴ աշխատակցին Ռեպո գործարք կնքելու մտադրության մասին, որի հիման վրա ՆԴ աշխատակիցը կազմում է Ռեպո համաձայնագիրը երկու օրինակից (Հավելված 8): Այնուհետև ՆԴ ղեկավարի տեղակալը և ՆԴ ղեկավարը ստուգանշում են այն և ներկայացնում ստորագրման Գործադիր տնօրենին կամ նման իրավասություն ունեցող Բանկի այլ պաշտոնատար անձին:

8.3. ՆԴ աշխատակիցը ստորագրված և կնքված Ռեպո համաձայնագիրը հանձնում է ՀՄԴ աշխատակցին, որը ներկայացնում է հակառակ կողմին՝ պատշաճ կերպով կնքման (եթե երկրորդ կողմը իրավաբանական անձ է) և ստորագրման, որից հետո պայմանագիրը լուսապատճենում է և ուղարկում ՆԴ և ՀԲ աշխատակիցներին:

8.4. Պատշաճ կերպով ստորագրված և կնքված Ռեպո համաձայնագրի հիման վրա ՆԴ պատասխանատու աշխատակիցն իրականացնում է պայմանագրի մուտքագրում Ծրագրային համակարգում, որը հաստատվում է ՆԴ ղեկավարի տեղակալի կամ ՆԴ ղեկավարի կողմից:

8.5. ՀԲ աշխատակիցը ծրագրային համակարգում իրականացնում է հաճախորդի դեպո հաշիվներից համապատասխան արժեթղթերի ելք և գումարի տրամադրում: Գործարքները հաստատվում են ՀԲ մեկ այլ աշխատակցի կողմից: Պայմանագրի լուսապատճենը պահվում է ՆԴ-ում՝ համապատասխան էլեկտրոնային թղթապանակում:

8.6. Բանկի Հաճախորդների հետ կնքվող Ռեպո համաձայնագրերի առարկա հանդիսացող օտարերկրյա արժեթղթերի գնահատումն իրականացվում է հիմք ընդունելով համապատասխան արժեթղթերի ընթացիկ գնման գինը: Որպես արժեթղթի ընթացիկ գնման գին ընդունվում է՝

Ամերիկյան հիմնական բորսաներում գնանշվող արժեթղթերի համար՝

- համապատասխան բորսայի նախորդ առևտրային նստաշրջանի փակման պահի դրությամբ արժեթղթի գնման գինը,

Եվրոպական հիմնական բորսաներում գնանշվող արժեթղթերի համար՝

- համապատասխան բորսայի նախորդ առևտրային նստաշրջանի փակման պահի դրությամբ արժեթղթի գնման գինը, եթե Ռեպո համաձայնագիրը Հաճախորդի հետ կնքվում է Բանկի գործառնական օրվա սկզբից մինչև տվյալ արժեթղթերի գծով նշված բորսայում նստաշրջանի բացման պահն ընկած ժամանակահատվածում,
- ընթացիկ գնման գինը, եթե Ռեպո համաձայնագիրը Հաճախորդի հետ կնքվում է տվյալ արժեթղթերի գծով նշված բորսայում նստաշրջանի բացման պահից մինչև Երևանի ժամանակով ժամը 15:00 ընկած ժամանակահատվածում:

Ռուսական հիմնական բորսաներում գնանշվող արժեթղթերի համար՝

- համապատասխան բորսայի նախորդ առևտրային նստաշրջանի փակման պահի դրությամբ արժեթղթի գնման գինը, եթե Ռեպո համաձայնագիրը Հաճախորդի հետ կնքվում է Բանկի գործառնական օրվա սկզբից մինչև տվյալ արժեթղթերի գծով նշված բորսայում նստաշրջանի բացման պահն ընկած ժամանակահատվածում,
- ընթացիկ գնման գինը, եթե Ռեպո համաձայնագիրը Հաճախորդի հետ կնքվում է տվյալ արժեթղթերի գծով նշված բորսայում նստաշրջանի բացման պահից մինչև Երևանի ժամանակով ժամը 15:00 ընկած ժամանակահատվածում:

8.7. Բանկի կողմից Ռեպո գործարքի շրջանակներում արժեթղթերի դիմաց տրամադրվող ֆինանսավորման չափը (Ռեպո գործարքի գումարը) հաշվարկվում է որպես արժեթղթի ընթացիկ գնի և իրացվելիության գործակցի արտադրյալ:

Տարբեր արժեթղթերի համար սահմանված իրացվելիության գործակիցները բերված են ստորև:

Արժեթղթի տեսակը	Միջազգային վարկանշային գործակալության կողմից տրված վարկանիշ	Գործարքի ժամկետ	
		մինչև 7 օր	8-14 օր
Պետական պարտատոմս	BBB- և բարձր	0.90	0.85
	BBB- -ից ցածր մինչև B-	0.85	0.80
Կորպորատիվ պարտատոմս	BBB- և բարձր	0.85	0.80
	BBB- -ից ցածր մինչև B-	0.80	0.75
Բաժնետոմս	BBB- և բարձր	0.75	0.70
	BBB- -ից ցածր մինչև B-	0.70	0.65

8.8. Միջազգային վարկանշային գործակալությունների կողմից չվարկանշված կամ կետ 8.7-ում նշված նվազագույն վարկանիշից ցածր վարկանիշ ունեցող ընկերությունների կամ պետությունների կողմից թողարկված արժեթղթերը չեն կարող ռեպո համաձայնագրի առարկա հանդիսանալ: Մի քանի գործակալությունների կողմից վարկանշված լինելու դեպքում որպես հաշվարկի հիմք ընդունվում է վարկանիշներից նվազագույնը:

9. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն ակտով սահմանված դրույթների կատարման, առաջացած խնդիրների մասին զեկուցման, ինչպես նաև ակտի վերանայման համար պատասխանատու է ՆԴ ղեկավարը:

9.2. Սույն ակտով սահմանված վարկային միջոցների տրամադրման դիմաց Բանկի կողմից գանձվող և ռեպո տոկոսադրույքները, ինչպես նաև Արժեթղթերի գնանշումները հաստատվում են Բանկի գործադիր տնօրենի կողմից օրական կտրվածքով՝ ՆԴ ղեկավարի առաջարկությամբ:

9.3. Ներքին դիտարկումների մարմնի գործառնությունները իրականացնող ստորաբաժանումը գործարքի, գործարքի կողմերի, իրական շահառուների և միջոցների ծագման վերաբերյալ տեղեկատվության ստանալու և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքով սահմանված գործառույթները իրականացնելու նպատակով իրականացնում է վերահսկողություն և ընթացիկ վերլուծություններ, որի շրջանակում կարող է գործարքի կողմերին իրականացնել հարցումներ՝ համագործակցելով ՆԴ և ՀՍԴ հետ:

9.4. Սույն ակտի իմաստով էլեկտրոնային կապի միջոցներով /Ներդրողի իրավասու էլեկտրոնային հասցե, ֆաքսիմիլային կապ և/կամ ԻնտերնետԲանկ համակարգ/ ուղարկված/ստացված, ստորագրված և/կամ ստորագրման ներկայացված փաստաթուղթ (ներառյալ առք/վաճառքի, ռեպո, վարկային պայմանագրեր և Ներդրողի հայտ), հաստատում, տեղեկացում և ցանկացած այլ տեղեկատվության փոխանակում համարվում է պատշաճ կերպով ուղարկված/ստացված և պաշտոնական, ինչպես նաև հանդիսանում է հիմք Ներդրողի՝ Բանկում սպասարկվող հաշիվներով գործարքների իրականացման համար:

Հավելված 1

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Պետական (գանձապետական) պարտատոմսերի շուկայում ծառայությունների մատուցման

ք. Երևան --./--/----թ

1. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերությունը (այսուհետև՝ Բանկ), ի դեմս Գործադիր տնօրեն՝ Գ. Մաչանյանի, որը գործում է Բանկի կանոնադրության հիման վրա, մի կողմից և «-------», (այսուհետև՝ Հաճախորդ), ի դեմս ----------, մյուս կողմից, միասին անվանվելով «Կողմեր», կնքեցին սույն գլխավոր համաձայնագիրը հետևյալի մասին.

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Բանկը Հաճախորդին մատուցում է հետևյալ ծառայությունները՝ ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի (այսուհետև՝ Պարտատոմս) առաջնային տեղաբաշխման կամ հետգնման աճուրդներին (այսուհետև՝ Աճուրդ) ներկայացնում է Հաճախորդի՝ Պարտատոմսերի ձեռքբերման (հետ վաճառքի) հայտերը (այսուհետև՝ Հայտ) մրցակցային և/կամ ոչ մրցակցային առաջարկություններով, իսկ Հաճախորդը վճարում է Բանկին մատուցված ծառայությունների դիմաց:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Հաճախորդը պարտավոր է Աճուրդին մասնակցելու ցանկություն ունենալու դեպքում՝

3.1.1. Աճուրդի անցկացման օրը, ոչ ուշ, քան ժամը 10:00-ը Սի-Բի-Էյ-Նեթ կամ ԻնտերնետԲանկ համակարգի միջոցով կամ թղթային եղանակով Բանկին ներկայացնել Հայտ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված 1.1-ի: Հայտը Բանկ ներկայացնելով՝ Ներդրողը միաժամանակ լիազորում է Բանկին անակցեպտ կարգով գանձել Ներդրողի համապատասխան հաշվում առկա դրամական միջոցները Ներդրողի՝ սույն Գլխավոր համաձայնագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կերպով կատարման համար:

3.1.2. Պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման աճուրդի անցկացման օրը, ոչ ուշ, քան ժամը 10:00-ը ապահովել ներկայացված Հայտում նշված պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ դրամական միջոցների (ներառյալ՝ Բանկի միջնորդավճարը) առնվազն տասը տոկոսի չափով գումարի առկայությունը /ներառյալ վերջնահաշվարկի օրվա դրությամբ կուտակումը/ Բանկի թիվ 250003691129 կամ Բանկում բացված Հաճախորդի՝ ՀՀ դրամով հաշվին, որը սառեցվում է ամբողջ ծավալով:

3.1.3. Պարտատոմսերի հետգնման աճուրդի անցկացման օրվան հաջորդող աշխատանքային օրը, ոչ ուշ, քան ժամը 10:00-ն ապահովել ներկայացված Հայտում նշված պարտատոմսերի առկայությունը Բանկի ներդրողների թիվ 2500041100006 հաշվին կամ Բանկի մոտ բացված Հաճախորդի դեպո հաշվին, որոնք սառեցվում են ամբողջ ծավալով:

3.2. Այն դեպքում, երբ Սի-Բի-Էյ-Նեթ կամ ԻնտերնետԲանկ համակարգի միջոցով կամ թղթային եղանակով Հայտի ներկայացումը Բանկին հնարավոր չէ իրականացնել, ապա Հաճախորդն իրավունք ունի մինչև սույն համաձայնագրի 3.1.1. կետում նշված ժամկետը հեռախոսային կապի միջոցով Բանկին փոխանցել Հայտով ներկայացման ենթակա տեղեկատվությունը՝ պայմանով, որ Հայտը Սի-Բի-Էյ-Նեթ կամ ԻնտերնետԲանկ համակարգի միջոցով կամ թղթային եղանակով կներկայացվի Բանկին մինչև տվյալ գործառնական օրվա ավարտը: Այս եղանակով ներկայացված հայտը համարվում է ընդունված, եթե բավարարվել են սույն համաձայնագրի 3.1.2. կամ 3.1.3. կետերում նշված պահանջները:

3.3. Հաճախորդը պարտավոր է վճարել Բանկի մատուցած ծառայությունների դիմաց՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված 1.3-ի:

3.4. Բանկը պարտավոր է՝

3.4.1. Աճուրդի արդյունքները ստանալուց հետո Հաճախորդի հետ համաձայնեցված կապի միջոցներով վերջինիս ուղարկել Հայտի բավարարման (մասնակի բավարարման) կամ մերժման մասին հաղորդագրություն՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված 1.2-ի:

3.4.2. Պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման աճուրդին ներկայացված Հայտի

- *լրիվ բավարարման դեպքում՝ /Հաճախորդի կողմից Հայտում ներկայացված անվանական ծավալին համարժեք գործարքի ընդհանուր գումարի ապահովման դեպքում/* մինչև Աճուրդի անցկացման օրվան հաջորդող գործառնական օրվա ավարտը Հաճախորդի Հայտի համաձայն ձեռք բերված պարտատոմսերը փոխանցել Հաճախորդի Հայտում նշված դեպո հաշվին,
- *լրիվ բավարարման դեպքում՝ /Հաճախորդի կողմից Հայտում ներկայացված անվանական ծավալին համարժեք գործարքի ընդհանուր գումարի առնվազն 10 տոկոսի չափով գումարի ապահովման դեպքում/* մինչև Աճուրդի անցկացման օրվան հաջորդող գործառնական օրվա ավարտը Հաճախորդի հետ կնքել Ռեպո համաձայնագիր, որի առարկա կհանդիսանան Հայտում ներկայացված պարտատոմսերը բավարարված ծավալի չափով,
- *մասնակի բավարարման դեպքում՝ /Հաճախորդի կողմից Հայտում ներկայացված անվանական ծավալին համարժեք գործարքի ընդհանուր գումարի ապահովման դեպքում/* մինչև Աճուրդի անցկացման օրվան հաջորդող գործառնական օրվա ավարտը Հաճախորդի Հայտի համաձայն ձեռք բերված արժեթղթերը փոխանցել Հաճախորդի Հայտում նշված դեպո հաշվին, իսկ չբավարարված մասին համապատասխան դրամական միջոցները (հանած Գործակալի միջնորդավճարը) մինչև Աճուրդի անցկացման օրվա ավարտը ապասառեցնել Հաճախորդի Հայտում նշված ՀՀ դրամով հաշվին,
- *մասնակի բավարարման դեպքում՝ / Հաճախորդի կողմից Հայտում ներկայացված անվանական ծավալին համարժեք գործարքի ընդհանուր գումարի առնվազն 10 տոկոսի չափով գումարի ապահովման դեպքում* / մինչև Աճուրդի անցկացման օրվան հաջորդող գործառնական օրվա ավարտը Հաճախորդի հետ կնքել Ռեպո համաձայնագիր, որի առարկա կհանդիսանան Հայտում ներկայացված պարտատոմսերը բավարարված ծավալի չափով, իսկ նախնական ներկայացված Հայտում նշված անվանական ծավալին համարժեք գործարքի գումարի և մասնակի բավարարված անվանական ծավալին համարժեք գործարքի

գումարների տարբերությունը /նախապես համաձայնեցվելով կողմերի միջև/ կարող է ապասառեցվել Հաճախորդի հաշվին:

- *մերժման դեպքում՝* մինչև Աճուրդի անցկացման օրվա գործառնական օրվա ավարտը Հաճախորդի Հայտում նշված պարտատոմսերի ձեռք բերման համար անհրաժեշտ դրամական միջոցները (ներառյալ Գործակալի միջնորդավճարը) ապասառեցնել Հաճախորդի Հայտում նշված ՀՀ դրամով հաշվին:

3.4.3. Պարտատոմսերի հետգնման աճուրդին ներկայացված Հայտի

- *լրիվ բավարարման դեպքում՝* մինչև Աճուրդի անցկացման օրվան հաջորդող գործառնական օրվա ավարտը Հաճախորդի Հայտում նշված պարտատոմսերի վաճառքից գոյացած դրամական միջոցները (հանած Գործակալի միջնորդավճարը) փոխանցել Հաճախորդի Հայտում նշված ՀՀ դրամով հաշվին,
- *մասնակի բավարարման դեպքում՝* մինչև Աճուրդի անցկացման օրվա գործառնական օրվա ավարտը Հաճախորդի Հայտի համաձայն չվաճառված պարտատոմսերն ապասառեցնել Հաճախորդի Հայտում նշված դեպո հաշվին, իսկ վաճառված պարտատոմսերի վաճառքից գոյացած դրամական միջոցները (հանած Գործակալի միջնորդավճարը) մինչև Աճուրդի անցկացման օրվան հաջորդող գործառնական օրվա ավարտը փոխանցել Հաճախորդի Հայտում նշված ՀՀ դրամով հաշվին,
- *մերժման դեպքում՝* մինչև Աճուրդի անցկացման օրվա գործառնական օրվա ավարտը Հաճախորդի Հայտի համաձայն վաճառքի ներկայացված պարտատոմսերն ապասառեցնել Հայտում նշված դեպո հաշվին:

3.5. Այն դեպքում, երբ Հայտի բավարարման (մասնակի բավարարման) կամ մերժման մասին հաղորդագրության ներկայացումը Հաճախորդին հնարավոր չէ իրականացնել, ապա Գործակալը հեռախոսային կապի միջոցով Հաճախորդին է փոխանցում Հայտի բավարարման (մասնակի բավարարման) կամ մերժման մասին տեղեկատվությունը, իսկ Հայտի բավարարման (մասնակի բավարարման) կամ մերժման մասին հաղորդագրությունը ուղարկվում է Հաճախորդին ֆաքսիմիլային կապի միջոցով:

4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Սույն համաձայնագրի կատարման հետ կապված հեռախոսային խոսակցությունները ձայնագրվում են Բանկի կողմից: Այդ ձայնագրությունները պատշաճ և բավարար ապացույց են համարվում դատական կարգով վեճերի լուծման ժամանակ ներկայացնելու համար:

4.2. Կողմերն ընդունում են, որ սույն համաձայնագրից բխող բոլոր այն հաղորդագրությունները (այդ թվում նաև՝ Հայտերը, Հայտի բավարարման (մասնակի բավարարման) կամ մերժման մասին հաղորդագրությունները և տեղեկատվությունը), որոնք ուղարկվել կամ ստացվել են հեռախոսային, ֆաքսիմիլային կապի միջոցներով կամ էլեկտրոնային եղանակով, ունեն նույնպիսի իրավաբանական ուժ, ինչպես թղթային կրիչների վրա ձևակերպված (թղթային եղանակով ստացված/ուղարկված) հաղորդագրությունները, և դրանք պատշաճ և բավարար ապացույց են համարվում դատական կարգով վեճերի լուծման ժամանակ ներկայացնելու համար:

4.3. Սույն համաձայնագրով Կողմերի միջև չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են համաձայն ՀՀ տվյալ ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների:

4.4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.5. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանիորեն լուծել սույն համաձայնագիրը՝ այդ մասին 15 օր առաջ տեղեկացնելով մյուս կողմին:

4.6. Կողմերն ազատվում են պատասխանատվությունից սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում, եթե պարտավորությունների կատարումն անհնարին է եղել համաձայնագիրը կնքելուց հետո առաջացած անհաղթահարելի ուժի հետևանքով:

4.7. Սույն համաձայնագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱՆԿ	*ՀԱՃԱԽՈՐԴ*
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	կազմակերպության լրիվ անվանումը
գտնվելու վայրը /իրավաբանական հասցեն/	գտնվելու վայրը /իրավաբանական հասցեն/
ՀՀ Կենտրոնական բանկ	ՀՀ Կենտրոնական բանկ
պետական գրանցումը իրականացնող մարմինը	պետական գրանցումը իրականացնող մարմինը
բանկային գործունեության լիցենզիա թիվ 84	
հեռախոս, ֆաքս,	հեռախոս, ֆաքս, այլ տվյալներ
ստորագրություն	ստորագրություն
Գևորգ Արամայիսի Մաչանյան	
(ներկայացուցչի) լրիվ անուն	(ներկայացուցչի) լրիվ անուն
Գործադիր տնօրեն	
պաշտոնը	պաշտոնը
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1.1

_____ _____

Դեպո հաշվի համարը Դրամային հաշվի համարը

Հ Ա Յ Տ N

AMG_____ թողարկման

թողարկման համարը

Պարտատոմսերի ձեռքբերման/հետ վաճառքի

պահանջվողը ընդգծել

_____, որպես Հաճախորդ, պատրաստակամություն է հայտնում աճուրդի ժամանակ իր հաշվին գնել/վաճառել Պարտատոմսեր հետևյալ պայմաններով.

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ			
N	Պարտատոմսերի ծավալը (դրամ)	Պարտատոմսերի գինը (դրամ)	Տարեկան եկամտաբերությունը (%)
1			
2			
3			
4			
5			
6			
7			
Ընդ.			

ՈՉ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ			
		միջին կշռված	---------

Հաճախորդ /իրավասու ներկայացուցիչ/
ստորագրություն՝

_____

Հավելված 1.2

_____ _____

Դեպո հաշվի համարը Դրամային հաշվի համարը

ՀԱՅՏԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ (ՄԱՍՆԱԿԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ) ԿԱՄ ՄԵՐԺՄԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան --/--/---/ --:--

Ներկայացվում է համաձայն «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի և «----------» -ի միջև «--» «------» 20--թ կնքված Պետական (գանձապետական) պարտատոմսերի շուկայում ծառայությունների մատուցման գլխավոր համաձայնագրի:

Ձեր կողմից «--» «---------» 20--թ-ին ներկայացված Հայտ N--ից բավարարվել են հետևյալ առաջարկությունները.

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ			
N	Պարտատոմսերի ծավալը (դրամ)	Պարտատոմսերի գինը (դրամ)	Տարեկան եկամտաբերությունը (%)
1			
2			
3			
4			
5			
6			
7			
Ընդ.			
ՈՉ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ			
		միջին կշռված	---------

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի
Գործադիր Տնօրեն՝
Գ. Մաչանյան

Կ.Տ

Հավելված 1.3

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐ

№	Պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով*	Միջնորդավճար	
1.	մինչև 50մլն ՀՀ դրամ	5,000 դրամ + Օպերատորի կողմից գանձվող միջնորդավճար	
2.	50 մլն ՀՀ դրամից ավելի	0.015%, բայց ոչ ավել, քան 30,000 դրամ + Օպերատորի կողմից գանձվող միջնորդավճար	

* Միջնորդավճարի չափը հաշվարկվում է միայն աճուրդին ներկայացված հայտի բավարարված ծավալի նկատմամբ:

*Հավելված 1**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Ներդրողների կողմից ՀՖԲ կողմից «___»_____20 թ.
անցկացված _____թողարկման Պետական Պարտատոմսերի
առաջնային/հետգնման Աճուրդի մասնակցության վերաբերյալ

	Ներդրողի անվանումը	Հաշվեհամարները	պարտատոմսերի անվանական ծավալը	Հայտի բավարարման ծավալը և գինը	%	Օպերատորի կողմից գանձվող միջնորդավճար
	Ընդամենը					

Հավելված 2

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան թիվ 000-00-00-0000

Օրը և ժամը՝ --/--/----/ --:--

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. ԳՆՈՐԴԸ պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված կարգով վճարել ՎԱՃԱՌՈՂԻՆ ստորև նշված գնման ընդհանուր գումարը

Հաշվարկային տվյալներ (ՎԱՃԱՌՈՂԻ դրամային հաշիվ)	
Արժույթի տեսակ և վճարման ձև	
Գործառնության օրը / ժամկետը	--/--/---- --:--
Պարտատոմսերի գործարքի գումարը	գումարը թվերով / գումարը տառերով/
Եկամտաբերություն	-- %

1.2. ՎԱՃԱՌՈՂԸ պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված կարգով վաճառել ԳՆՈՐԴԻՆ հետևյալ պետական գանձապետական պարտատոմսերը.

Հաշվարկային տվյալներ (ԳՆՈՐԴԻ դեպո հաշիվ)	
Գործառնության օրը / ժամկետը	--/--/---- --:--
Պարտատոմսերի պետական գրանցման համարը	
Պարտատոմսերի անվանական ծավալը	գումարը թվերով / գումարը տառերով/

1.3 Եթե գործարքի գծով վերջնահաշվարկները կատարվում են երկրորդ կողմի՝ բանկում սպասարկվող հաշիվներով, ապա երկրորդ կողմը տալիս է իր համաձայնությունը, որպեսզի բանկն անակցեպտ կարգով գանձի նշված արժեթղթերը և/կամ գումարները նշված դրամային և/կամ դեպո հաշիվներից:

2. ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

2.1. Սույն պայմանագրով նախատեսված վճարումները (փոխանցումները) պետք է ստացվեն համապատասխան գործառնության օրը մինչև վճարման (փոխանցման) ստացման վայրում այդ վճարման (փոխանցման) համար սահմանված ժամկետը: Իսկ նման որոշակի ժամկետի բացակայության դեպքում գործառնական օրվա վերջը՝ ըստ գործարար պրակտիկայի:

2.2. Եթե վճարումը (փոխանցումը) ստացվել է համապատասխան գործառնության օրը, սակայն ավելի ուշ քան նախատեսված է 2.1 կետով, ապա այդ վճարումը (փոխանցումը), սույն պայմանագրի 1.1-1.3 կետերի իմաստով, համարվում է ստացված հաջորդ աշխատանքային օրը:

2.3. Սույն պայմանագրով ստանձնված պարտավորությունների գծով հաշվարկներն իրականացվում են Առաքում վճարման դիմաց (DVP) սկզբունքով:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Եթե կողմերից որևէ մեկը ժամանակին չի կատարում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետերում նշված իր պարտավորությունները, ապա սույն պայմանագրի մյուս կողմին վճարում է տուգանք հետևյալ գումարի չափով՝ 100,000.00 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ և տույժ՝ չվճարված գումարի [կամ չփոխանցված պետական գանձապետական պարտատոմսի անվանական արժեքի] տարեկան 1.00 տոկոսի չափով՝ ուշացման յուրաքանչյուր (ներառյալ առաջին) օրացուցային օրվա համար:

3.2. Եթե կողմերից որևէ մեկը հրաժարվում է կատարել 1.1 կամ 1.2 կետերով նախատեսված իր պարտավորությունները, ապա մյուս կողմը պարտավոր չէ կատարել պարտավորության իր մասը: Նման դեպքերում կողմերը վերադարձնում են սույն պայմանագրի գծով ստացված գումարները և պետական գանձապետական պարտատոսերը (բացառությամբ 3.1 կետով նախատեսված տույժերի), իսկ 1.1 կամ 1.2 կետերը խախտող կողմը վճարում է տուգանք համապատասխան կետով նախատեսված ամբողջ գումարի կամ պետական գանձապետական պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքի 5.00 տոկոսին համարժեք չափով, ինչից հետո գործարքը համարվում է լուծված:

3.3. Պայմանագրի 3.1 և 3.2 կետերով նախատեսված վճարումները (փոխանցումները) պետք է կատարվեն դրանց հիմքի առաջացման օրվան հաջորդող երկու բանկային օրվա ընթացքում, ինչի դեպքում կողմերը ազատվում են լրացուցիչ վնասների հատուցման պարտականությունից: Բոլոր տույժերը և տուգանքները վճարվում են վճարման արժույթով, կամ, այլապես, ՀՀ դրամով՝ վճարման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական Բանկի պաշտոնական փոխարժեքով:

3.4. Կողմերը պատասխանատու են սույն պայմանագրով իրենց պարտավորությունները ժամանակին չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար, եթե պարտավորությունները խախտած կողմը չապացուցի, որ պարտավորությունների ժամանակին պատշաճ կատարումն անհնար է եղել անկանխատեսելի անհաղթահարելի ուժի պատճառով (որը, սակայն, չի ներառում տեխնիկական սարքերի անսարքությունը) և ձեռնարկվել են բոլոր հնարավոր միջոցները պարտավորությունը պատշաճ կատարելու, ինչպես նաև պայմանագրի մյուս կողմից ստացվածը վերադարձնելու և անհաղթահարելի ուժի հետևանքով պարտավորությունների կատարման անհնարինության մասին տեղեկացնելու ուղղությամբ:

3.5. Սույն պայմանագիրը կարող է կնքվել նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (պայմանագրի՝ կողմի կողմից ստորագրված օրինակը) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից: Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիրը կնքելիս, էլեկտրոնային թվային ստորագրությամբ չպաշտպանված էլեկտրոնային պայմանագիրն ունի նույն իրավական նշանակությունը, ինչը կողմի կողմից ձեռագիր ստորագրված պայմանագիրը:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Սույն պայմանագրի նպատակներով բոլոր տոկոսագումարները հաշվարկվում են օրական կտրվածքով՝ օրական տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք ընդունելով 365 օր օրացուցային տարին:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.3. Սույն պայմանագիրը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ: Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.4. Սույն պայմանագիրը կազմված և կնքված է երկու հավասարազոր օրինակից՝ հայերեն լեզվով, և մեկական օրինակ պահվում է կողմերից յուրաքանչյուրի մոտ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	ԵՐԿՐՈՐԴ ԿՈՂՄ
գտնվելու վայրը /իրավաբանական հասցեն/ դեպո՝ դրամ՝ ՀՀ Կենտրոնական բանկ պետական գրանցումը իրականացնող մարմինը բանկային գործունեության լիցենզիա թիվ 84 հեռախոս, ֆաքս, այլ տվյալներ	դեպո՝ դրամ՝ պետական գրանցումն իրականացնող մարմինը (ֆիզիկական անձի դեպքում անձնագրի սերիան, համարը) հեռախոս, ֆաքս, այլ տվյալներ
ստորագրություն Գևորգ Մաչանյան (ներկայացուցչի) լրիվ անուն Գործադիր տնօրեն պաշտոնը Կ.Տ.	ստորագրություն (ներկայացուցչի) լրիվ անուն Կ.Տ.

Հավելված 3

ՌԵՊՈ/ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
0000-00-00-20--

ք.Երևան --/--/----/ --:--

---------- ի դեմս ----------, (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից և ---------- (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Գնորդը Վաճառողից գնում է հետևյալ արժեթղթերը.

Արժեթղթերի տեսակը	Արժեթղթերի ծավալը	Արժեթղթերի գինը
-	-	-
Ընդամենը	-	-

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդը պարտավորվում է համաձայնագրի կնքման օրը մուտքագրել /գումարը թվերով և տառերով/ ՀՀ դրամ Վաճառողի N ----- հաշվին:

2.2 Վաճառողը պարտավորվում է սույն համաձայնագրի կնքման օրը սույն համաձայնագրի 1.1 կետում նշված արժեթղթերը փոխանցել Գնորդի N ----- դեպո հաշվին:

2.3 Վաճառողը պարտավորվում է --/--/----/թ. հետ գնել սույն համաձայնագրի 1.1 կետում նշված արժեթղթերը: Վաճառողը պարտավորվում է սույն համաձայնագրի 2.1. կետում նշված գումարը, ինչպես նաև այդ գումարի տարեկան --%-ի չափով ռեպո տոկոսագումարը, որը կազմում է ___.00 /գումարը թվերով և տառերով/ ՀՀ դրամ --/--/----/թ. ապահովել իր---սպասարկվող N ---- հաշվին և լիազորում է Գնորդին գանձել այն:

2.4 Գնորդը պարտավորվում է --/--/----/թ. փոխանցել սույն համաձայնագրի 1.1 կետում նշված արժեթղթերը Վաճառողի N---- դեպո հաշվին:

2.5 Վաճառողի կողմից սույն համաձայնագրի 2.3 կետով սահմանված ժամկետներում ստանձնած պարտավորությունները ժամանակին և պատշաճ կերպով չկատարելուց 3 աշխատանքային օր հետո արժեթղթերն անցնում են Գնորդի տնօրինմանը:

2.6 Սույն համաձայնագրով սահմանված ժամկետների՝ կողմերից որևէ մեկի խախտման դեպքում, խախտող կողմը պարտավորվում է վճարել տույժ գործարքի գումարի 0.1 %-ի չափով յուրաքանչյուր ուշացած օրվա համար:

2.7 Գործարքի կնքման օրը գործարքից հրաժարվելու դեպքում հրաժարվող կողմը պարտավորվում է վճարել տուգանք գործարքի գումարի 5.00 %-ի չափով՝ մյուս կողմին վերադարձնելով նրանից ողջ ստացածը:

2.8 Կողմերն անառարկելի կարգով միմյանց ուղարկված ծանուցումները և/կամ գրությունները համարում են պատշաճ ձևով ստացված (պատշաճ ձևով ծանուցված, հանձնված) այն պահից, երբ Կողմերը դրանք ստացել են առձեռն մյուս Կողմից, և/կամ դրանք Կողմերին հանձնվել են առձեռն ցրիչի միջոցով և/կամ ուղարկվել են Կողմերի նշած էլեկտրոնային փոստով (առկա է ստանալու մասին էլեկտրոնային հավաստում, եթե նույնիսկ բացակայում է այն կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը), և/կամ ուղարկվել են պատվիրված փոստային նամակով (հեռագրով)՝ Կողմերի նշած հասցեով, և/կամ Կողմերի միջև համաձայնեցված կապի այլ միջոցներով, և/կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ կարգով: Եթե Կողմերը հրաժարվում

են մյուս Կողմից, և/կամ ցրիչից, և/կամ փոստատարից ստանալ ծանուցումները և/կամ գրությունները, և/կամ դրանք հետ են վերադառնում ուղարկող Կողմին՝ Կողմի նշած հասցեի և/կամ էլեկտրոնային փոստի սխալ և/կամ հասցեատիրոջ բացակայության և/կամ ուղարկող Կողմի սխալը բացառող այլ նշումներով, ապա ծանուցումները և/կամ գրությունները համարվում են պատշաճ ձևով ստացված (պատշաճ ձևով ծանուցված, հանձնված) դրանք ստանալուց հրաժարվելու և/կամ սույն կետով սահմանված որևէ նշումով դրանք ուղարկող Կողմին հետ վերադարձնելու պահից, էլեկտրոնային հավաստումը ստանալու մասին ծանուցումն ստանալուն հաջորդող օրվանից:

2.9 Սույն պայմանագիրը կարող է կնքվել նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (պայմանագրի՝ կողմի կողմից ստորագրված օրինակը) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից: Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիրը կնքելիս, էլեկտրոնային թվային ստորագրությամբ չպաշտպանված էլեկտրոնային պայմանագիրն ունի նույն իրավական նշանակությունը, ինչը կողմի կողմից ձեռագիր ստորագրված պայմանագիրը:

2.10 Կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

2.11 Սույն համաձայնագիրը կազմված է երկու օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
գտնվելու վայրը /իրավաբանական հասցեն/ դեպո՝ դրամ՝ պետական գրանցումը իրականացնող մարմինը հեռախոս, ֆաքս, այլ տվյալներ	դեպո՝ դրամ՝ հեռախոս, ֆաքս, այլ տվյալներ
ստորագրություն (ներկայացուցչի) լրիվ անուն Պաշտոն պաշտոնը Կ.Տ.	ստորագրություն (ներկայացուցչի) լրիվ անուն

*Հավելված 3**

ՌԵՊՈ/ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
0000-00-00-20--

ք.Երևան --/--/----/ --:--

---------- ի դեմս ----------, (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից և ---------- (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.2 Գնորդը Վաճառողից գնում է հետևյալ արժեթղթերը.

Արժեթղթերի տեսակը	Արժեթղթերի անվանական արժեքը	Արժեթղթերի գինը
-	-	-
Ընդամենը	-	-

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Գնորդը պարտավորվում է համաձայնագրի կնքման օրը մուտքագրել -------- /գումարը թվերով և տառերով/ ՀՀ դրամ Վաճառողի N ----- հաշվին:

2.2. Վաճառողը պարտավորվում է սույն համաձայնագրի կնքման օրը սույն համաձայնագրի 1.1 կետում նշված արժեթղթերը փոխանցել Գնորդի N ----- դեպո հաշվին /կամ լիազորում է Գնորդին գանձել արժեթղթերը բանկում սպասարկվող իր դեպո հաշվից/:

2.3. Վաճառողը պարտավորվում է --/--/----/թ. հետ գնել սույն համաձայնագրի 1.1 կետում նշված արժեթղթերը: Վաճառողը պարտավորվում է սույն համաձայնագրի 2.1. կետում նշված գումարը, ինչպես նաև այդ գումարի տարեկան --%-ի չափով ռեպո տոկոսագումարը, որը կազմում է ___.00 /գումարը թվերով և տառերով/ ՀՀ դրամ --/--/----/թ. ապահովել իր--- սպասարկվող N ---- հաշվին և լիազորում է Գնորդին գանձել այն:

2.4. ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակվող լոմբարդային ռեպո տոկոսադրույքի բարձրացման դեպքում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) իրավունք ունի միակողմանի վերանայել համաձայնագրով սահմանված ռեպո տոկոսադրույքը՝ սահմանելով այն ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակվող լոմբարդային ռեպո տոկոսադրույքին գումարած 2.00%: Բարձրացված ռեպո տոկոսադրույքը գործում է ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակվող լոմբարդային ռեպո տոկոսադրույքի ուժի մեջ մտնելու օրվանից:

2.5. Բանկը պարտավորվում է ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակվող լոմբարդային ռեպո տոկոսադրույքն ուժի մեջ մտնելու օրվանից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում հաճախորդին կամ նրա կողմից լիազորված անձին Բանկին տրամադրված կոնտակտային տվյալների միջոցով (ներառյալ էլեկտրոնային եղանակով) ծանուցել ռեպո տոկոսադրույքի փոփոխության մասին: Բանկի կողմից ծանուցում չուղարկելու պարագայում համաձայնագրով սահմանված ռեպո տոկոսադրույքը մնում է անփոփոխ:

2.6. ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող «**ՀՀ ԿԲ հետ ռեպո գործառնությունների համար ընդունելի արժեթղթերի ցանկը, գները և մինչև մարում եկամտաբերությունները»** փաստաթղթում ներառված Գնվող ակտիվի տրանշի համար գործող մինչև մարում եկամտաբերության ցուցանիշի աճի արդյունքում վաճառված արժեթղթերի գինը 2.1 կետում նշված ռեպո գումարից նվազելու դեպքում Բանկն իրավունք ունի պահանջել Վաճառողից մարել առաջացած

բացասական տարբերությունը՝ ապահովելով համապատասխան դրամական միջոցներ և/կամ այլ՝ Բանկի համար ընդունելի ակտիվ:

2.7. Գնորդը պարտավորվում է --/--/----/թ. փոխանցել սույն համաձայնագրի 1.1 կետում նշված արժեթղթերը Վաճառողի Բանկում սպասարկվող N---- դեպո հաշվին:

2.8. Վաճառողի կողմից սույն համաձայնագրի 2.3 կետով սահմանված ժամկետներում ստանձնած պարտավորությունները ժամանակին և պատշաճ կերպով չկատարելու արդյունքում պարտավորությունները ժամկետանց ձևակերպելուց 3 աշխատանքային օր հետո արժեթղթերն անցնում են Գնորդի տնօրինմանը: Վաճառողը պարտավորվում է Գնորդին վճարել Գնորդի տնօրինմանն անցնելու նախորդ օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող «ՀՀ ԿԲ հետ ռեպո գործառնությունների համար ընդունելի արժեթղթերի ցանկը, գները և մինչև մարում եկամտաբերությունները» փաստաթղթում 1.2 կետում նշված արժեթղթերի համար սահմանված գնի և ռեպո գործարքի գումարի տարբերությունը, եթե այն բացասական է:

2.9. Սույն համաձայնագրով սահմանված ժամկետների՝ կողմերից որևէ մեկի խախտման դեպքում, խախտող կողմը պարտավորվում է վճարել տույժ գործարքի գումարի 0.1 %-ի չափով, յուրաքանչյուր ուշացած օրվա համար:

2.10. Գործարքի կնքման օրը գործարքից հրաժարվելու դեպքում հրաժարվող կողմը պարտավորվում է վճարել տուգանք գործարքի գումարի 5.00 %-ի չափով՝ մյուս կողմին վերադարձնելով նրանից ողջ ստացածը:

2.11. Կողմերն անառարկելի կարգով միմյանց ուղարկված ծանուցումները և/կամ գրությունները համարում են պատշաճ ձևով ստացված (պատշաճ ձևով ծանուցված, հանձնված) այն պահից, երբ Կողմերը դրանք ստացել են առձեռն մյուս Կողմից և/կամ դրանք Կողմերին հանձնվել են առձեռն ցրիչի միջոցով, և/կամ ուղարկվել են ԻնտերնետԲանկ համակարգով և/կամ Կողմերի նշած էլեկտրոնային փոստով (առկա է ստանալու մասին էլեկտրոնային հավաստում, եթե նույնիսկ բացակայում է այն կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը), և/կամ ուղարկվել են պատվիրված փոստային նամակով (հեռագրով)՝ Կողմերի նշած հասցեով, և/կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ կարգով: Եթե Կողմերը հրաժարվում են մյուս Կողմից, և/կամ ցրիչից, և/կամ փոստատարից ստանալ ծանուցումները և/կամ գրությունները, և/կամ դրանք հետ են վերադառնում ուղարկող Կողմին՝ Կողմի նշած հասցեի և/կամ էլեկտրոնային փոստի սխալ և/կամ հասցեատիրոջ բացակայության և/կամ ուղարկող Կողմի սխալը բացառող այլ նշումներով, ապա ծանուցումները և/կամ գրությունները համարվում են պատշաճ ձևով ստացված (պատշաճ ձևով ծանուցված, հանձնված) դրանք ստանալուց հրաժարվելու և/կամ սույն կետով սահմանված որևէ նշումով դրանք ուղարկող Կողմին հետ վերադարձնելու պահից, էլեկտրոնային հավաստումը ստանալու մասին ծանուցումն ստանալուն հաջորդող օրվանից:

2.12. Սույն պայմանագիրը կարող է կնքվել նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (պայմանագրի՝ կողմի կողմից ստորագրված օրինակը) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից: Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիրը կնքելիս, էլեկտրոնային թվային ստորագրությամբ չպաշտպանված էլեկտրոնային պայմանագիրն ունի նույն իրավական նշանակությունը, ինչը կողմի կողմից ձեռագիր ստորագրված պայմանագիրը:

2.13. Կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

2.14. Սույն համաձայնագիրը կազմված է երկու օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
գտնվելու վայրը /իրավաբանական հասցեն/ դեպո՝ դրամ՝ պետական գրանցումը իրականացնող մարմինը հեռախոս, ֆաքս, այլ տվյալներ	դեպո՝ դրամ՝ հեռախոս, ֆաքս, այլ տվյալներ
ստորագրություն (ներկայացուցչի) լրիվ անուն Պաշտոն պաշտոնը Կ.Տ.	ստորագրություն (ներկայացուցչի) լրիվ անուն

Հավելված 3.1

<u>Փոխադարձ պարտավորությունների հաշվանցում /նեթինգ/</u> /թիվ ----------/		
Բանկ	«Արմսվիսբանկ» ՓԲԸ	_/_/20__
ԵՐԿՐՈՐԴ ԿՈՂՄ	----------	
ԵԼՔ /Երկրորդ կողմի հաշվից/		Երկրորդ կողմի հաշվեհամար
արժույթ, ծավալ	---------.--	----------
արժեթղթեր, ծավալ	---------.--	--- ----------
ՄՈՒՏՔ /Երկրորդ կողմի հաշվին/		Երկրորդ կողմի հաշվեհամար
արժույթ, ծավալ	---------.--	----------

արժեթղթեր, ծավալ	---------.--	----------
Ստորագրություն _____		

Հավելված 4

ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Թիվ 000000-00-00-20--

ք. Երևան --/--/----/ --:--

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն /այսուհետ՝ Վարկատու/, ի դեմս Գործադիր տնօրեն Գ. Մաչանյանի, որը գործում է համաձայն կանոնադրության, մի կողմից և ---------- (այսուհետ՝ Վարկառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վարկատուն Վարկառուին տրամադրում է վարկ -,-- (____) գումար:

1.2. Վարկատուն վարկը տրամադրում է մինչև --/--/---- -ը:

1.3. Վարկի օգտագործման համար սահմանվում է տարեկան տոկոսադրույք՝ -.--%-ի չափով:

1.4. Տոկոսագումարը հաշվարկվում է սկսած վարկի տրամադրման օրվանից մինչև վարկի վերջնական մարման օրը, վարկի փաստացի օգտագործած օրերի համար:

1.5. Վարկը համարվում է տրամադրված՝ վարկի գումարը Վարկառուի թիվ N---- հաշվին մուտքագրելու օրվանից:

1.6. Սույն պայմանագրով հաշվարկների իրականացման համար տարին ընդունվում է 365 օր:

1.7. Վարկի օգտագործման համար տոկոսագումարի վճարումը կատարվում է ժամկետի վերջում, վարկի մարման հետ միաժամանակ:

1.8. Սույն վարկը տրամադրվում է գրավի ապահովվածությամբ: Գրավի առարկա են հանդիսանում --/--/----թ. կնքված «Գրավի Պայմանագիր N 000000-00-00-20--»-ում նշված արժեթղթերը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Վարկառուն պարտավորվում է վարկի գումարը և հաշվարկված տոկոսագումարը սույն պայմանագրի 1.2. և 1.7. կետերում նշված ժամկետում, 1.1. և 1.3. կետերում նշված չափով ապահովել իր՝ Վարկատուի մոտ սպասարկվող -------- հաշվին և լիազորում անակցեպտ կարգով գանձել այդ

գումարները սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կերպով կատարման համար:

2.2. Վարկատուն պարտավորվում է սույն պայմանագրի 1.1. կետում նշված գումարը նույն օրը մուտքագրել Վարկառուի ---------ում սպասարկվող թիվ N---- հաշվին:

2.3. Վարկը 1.2. կետում նշված ժամկետում չմարելու դեպքում ձևակերպվում է ժամկետանց, և տոկոսները հաշվարկվում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքով:

2.4. Սույնով Վարկառուն Վարկատուին հանձնարարում է սույն պայմանագրի 1.2. և 1.7. կետերում պարտավորությունների չկատարման դեպքում անհրաժեշտ գումարներն անակցեպտ գանձել Վարկատուի մոտ բացված իր բոլոր բանկային հաշիվներից, անհրաժեշտության դեպքում փոխարկել Վարկատուի մոտ տվյալ պահին գործող փոխարժեքով և ուղղել սույն պայմանագրով ստանձնած վարկային և/կամ այլ պարտավորությունների կատարմանը:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3.2. Ժամկետից շուտ վարկի մարումը կատարվում է միայն Բանկի համաձայնությամբ:

3.3. Սույն պայմանագրի կապակցությամբ առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրության համաձայն:

3.4. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով երկու իրավահավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ կազմակերպության լրիվ անվանումը գտնվելու վայրը /իրավաբանական հասցեն/ դեպո՝ դրամ՝ ՀՀ Կենտրոնական բանկ պետական գրանցումը իրականացնող մարմինը բանկային գործունեության լիցենզիա թիվ 84 հեռախոս, ֆաքս, այլ տվյալներ	*Վարկառու* դեպո՝ դրամ՝ հեռախոս, ֆաքս, այլ տվյալներ
ստորագրություն Գևորգ Մաչանյան (երկայացուցչի) լրիվ անուն Գործադիր տնօրեն պաշտոնը	ստորագրություն (ներկայացուցչի) լրիվ անուն

Հավելված 5

ԳՐԱՎԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 000000-00-00-20--

ք. Երևան --/--/----/ --:--

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն, ի դեմս Գործադիր տնօրեն Գ.Մաչանյանի, (այսուհետև՝ Գրավառու), մի կողմից և ---------- (այսուհետև՝ Գրավատու), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Գրավատուն գրավառուի մոտ գրավ է դնում ներքոհիշյալ աղյուսակում նշված արժեթղթերը ի ապահովումն --/--/---ին կնքված 000000-00-00-20-- վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման՝

Արժեթղթերի տեսակը	Արժույթ	Արժեթղթերի անվանական արժեքը	Արժեթղթերի գինը
-	-	-	-
Ընդամենը	-	-	-

1.2 Գրավը դրվում է մինչև վարկի մարումը:

1.3 Վարկերի մայր գումարների և տոկոսագումարների մասնակի և/կամ ամբողջական մարման չափը, պարբերականությունն ու ժամանակացույց(ներ)ը սահմանվում են Վարկային պայմանագրով:

1.4 1.1 կետում նշված արժեթղթերը գրավադրվում են ի օգուտ Գրավառուի ------- սպասարկվող թիվ N---- դեպո հաշվին:

1.5 Սույն պայմանագրով Գրավատուն հանձնարարում է Գրավառուին՝ Վարկառուի կողմից Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ մասնակի կամ ամբողջական և/կամ հաշվարկված տոկոսագումարները և/կամ տուժանքը՝ Վարկային պայմանագրում նշված մարման օրվա (վերջնաժամկետի օրը) մինչև ժամը 16:00-ն չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու դեպքում, հաջորդ աշխատանքային օրը Գրավի առարկա հանդիսացող արժեթղթերը վաճառել արժեթղթերի բորսայում և ուղղել Վարկային պայմանագրով ստանձնած Վարկառուի չկատարված պարտավորությունների մարմանը, իսկ հավելյալ միջոցներն ուղղել Գրավատուի Բանկում բացված թիվ N---- հաշվին:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գրավատուն իրավունք ունի վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից հետո հետ պահանջել գրավադրված արժեթղթերը:

2.2 Գրավառուն պարտավորվում է Գրավատուի կողմից վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարելուց հետո գրավադրված արժեթղթերը հանել գրավից:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

3.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում սույն և N 000000-00-00-20-- վարկային պայմանագրերը ստորագրելուց հետո և ուժի մեջ է մինչև վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունների լրիվ կատարումը:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

Գրավառու կազմակերպության լրիվ անվանումը գտնվելու վայրը /իրավաբանական հասցեն/ դեպո՝ դրամ՝ ՀՀ Կենտրոնական բանկ պետական գրանցումը իրականացնող մարմինը բանկային գործունեության լիցենզիա թիվ 84 հեռախոս, ֆաքս, այլ տվյալներ	*Գրավատու* դեպո՝ դրամ՝ հեռախոս, ֆաքս, այլ տվյալներ
ստորագրություն Գևորգ Մաչանյան (երկայացուցչի) լրիվ անուն Գործադիր տնօրեն պաշտոնը Կ.Տ.	ստորագրություն (ներկայացուցչի) լրիվ անուն

Հավելված 6

Կարգավորվող շուկայում ռեպո պայմանագիր կնքելու հայտ

Հաճախորդի դեպո հաշվի համարը՝ N----
Custody account N

Հաճախորդի դրամային հաշվի համարը՝ N----
Current account N

N	Թողարկողի անվանումը The issuer	Արժեթղթերի դասը The type of securities	Գործարքի կնքման վայրը The place of deal	Գործարքի տեսակը The type of deal	Պատվերի տրման ժամանակը The time of order	Ռեպո տոկոսադրույք Price	Քանակը Quantity	Ընդհանուր ծավալը Total volume	Գործարքի ժամկետ Term of the deal
1.	-------	անվանական արժեկտրոնային պարտատոմս AM00000000	«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ NASDAQ OMX Armenia OJSC	ՌԵՊՈ	--/--/----:--	-.--%	-	-.--	

Հաճախորդ /client/_
(օրինական ներկայացուցիչ)_

Հայտն ընդունեցի (ստորագրություն)
The order was accepted by signature

(ստորագրություն) signature

Հավելված 7

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ռեպո գործարքի վերաբերյալ

___/_____/_____
հաշվետու
ժամանակաշրջանի սկիզբը
(օր/ամիս/տարի)

_____
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն

Պատվերի համարը և տրման ժամանակը	Պատվերի տեսակը	Ռեպոյի կնքման ամսաթիվ	Ռեպոյի մարման ամսաթիվ	Թողարկողի անվանումը, արժեթղթերի տեսակը և տարբերակիչ ծածկագիրը	Արժույթ	Անվանական արժեք	Ընդհանուր ծավալ	Եկամտաբերություն	Գանձվող միջնորդավճար

Գործադիր տնօրեն՝ _____ (անուն, ազգանուն)
(ստորագրություն)
____._____. ___ թ.

Հավելված 8

Օտարերկրյա արժեթղթերով ՌԵՊՈ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

RA 0000-04-00-20--

ք.Երևան --/--/---- --:--

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ), ի դեմս Գործադիր տնօրեն Գ.Մաչանյանի և ---------- (այսուհետ Վաճառող), ----------, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Բանկը Վաճառողից գնում է հետևյալ արժեթղթերը.

Թողարկողի անվանումը		
Արժեթղթերի տեսակը		
Տարբերակիչ ծածկագիրը		
Արժեթղթերի ծավալը/քանակը		
Մեկ արժեթղթերի գնման գինը		
Վաճառվող արժեթղթերի ընդհանուր շուկայական գինը		
Իրացվելիության գործակիցը (%)		
Գործարքի գումարը		
Գործարքի ընդհանուր ծավալը		

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Սույնով Վաճառողն իրավունք է վերապահում Բանկին համաձայնագրի կնքման օրը գանձել 1.1. կետում նշված արժեթղթերը Բանկում սպասարկվող իր թիվ ---- դեպո հաշվից:

2.2. Բանկը 1.1. կետում նշված արժեթղթերը գանձելուց հետո պարտավորվում է մինչև տվյալ գործառնական օրվա ավարտը ---,---,---.-- /----------/ ---------- մուտքագրել Վաճառողի Բանկում սպասարկվող թիվ ---------- դրամային հաշվին:

2.3. Վաճառողը պարտավորվում է ---------- թ. հետ գնել 1.1. կետում նշված արժեթղթերը՝ վճարելով սույն համաձայնագրի 2.2. կետում նշված գումարը, ինչպես նաև այդ գումարի տարեկան -----%-ի չափով ռեպո-տոկոսագումարը, որը կազմում է ---,---.-- /----------/ ՀՀ դրամ և -- լումա: Վաճառողը պարտավորվում է նշված ամբողջ գումարն ապահովել Բանկում սպասարկվող իր թիվ ---------- դրամային հաշվին և լիազորում է Բանկին անակցեպտ կարգով գանձել այն:

2.4. Վաճառողի կողմից, սույն համաձայնագրի 2.3. կետով ստանձնած պարտավորությունները ժամանակին և պատշաճ կատարելու դեպքում, Բանկը պարտավորվում է, ----------թ. փոխանցել սույն համաձայնագրի 1.1. կետում նշված արժեթղթերը Վաճառողի Բանկում սպասարկվող թիվ ----------դեպո հաշվին:

2.5. Սույն համաձայնագրի 2.3 կետով սահմանված ժամկետներում Վաճառողի կողմից վերջինիս պարտավորությունները ժամանակին և պատշաճ կերպով չկատարելու դեպքում, Բանկի տվյալ գործառնական օրվա ավարտից հետո, սույն համաձայնագրի 1.1. կետում նշված արժեթղթերը անցնում են Բանկի տնօրինմանը:

2.6. Գործարքից հրաժարվելու կամ սույն համաձայնագրի 2.2. և 2.3. կետերով ստանձնած պարտավորությունները թերի կատարելու կամ չկատարելու դեպքում, թերացող (գործարքից հրաժարվող) կողմը մյուս կողմին վճարում է տուգանք՝ գործարքի գումարի 10.00 %-ի չափով, իսկ համաձայնագիրը համարվում է լուծված: Այս դեպքում կողմերը պարտավորվում են վերադարձնել միմյանցից ողջ ստացածը:

2.7. Սույն համաձայնագրի 2.6. կետով ստանձնած պարտավորությունները Վաճառողի կողմից չկատարելու դեպքում Վաճառողը լիազորում է Բանկին անհրաժեշտ գումարներն անակցեպտ կարգով գանձել իր դրամային հաշիվներից, իսկ դրամային հաշիվներում եղած դրամական միջոցների անբավարար լինելու դեպքում Բանկին հանձնարարում է՝ պարտավորությունը մարելու համար անհրաժեշտ ծավալով, շուկայում առկա ընթացիկ գնով վաճառել իր դեպո հաշիվներում առկա արժեթղթերը և ստացված միջոցների հաշվին անակցեպտ կարգով մարել առաջացած պարտավորությունները:

2.8. Սույն պայմանագիրը կարող է կնքվել նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (պայմանագրի՝ կողմի կողմից ստորագրված օրինակը) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից: Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիրը կնքելիս, էլեկտրոնային թվային ստորագրությամբ չպաշտպանված էլեկտրոնային պայմանագիրն ունի նույն իրավական նշանակությունը, ինչը կողմի կողմից ձեռագիր ստորագրված պայմանագիրը:

2.9. Կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

2.10. Սույն համաձայնագիրը կազմված է երկու օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

3.ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	*ՎԱՃԱՌՈՂ*
_____ գտնվելու վայրը /իրավաբանական հասցեն/	_____ գտնվելու վայրը /իրավաբանական հասցեն/
Դրամային հաշիվ _____	դեպո հաշիվ՝ _____ դրամային հաշիվ՝_____
ՀՀ Կենտրոնական բանկ պետական գրանցումը իրականացնող մարմինը	_____ պետական գրանցումը իրականացնող մարմինը
բանկային գործունեության լիցենզիա թիվ 84	_____
_____ հեռախոս, ֆաքս, այլ տվյալներ	հեռախոս, ֆաքս, այլ տվյալներ
ստորագրություն	ստորագրություն
Գևորգ Մաչանյան (երկայացուցչի) լրիվ անուն	(ներկայացուցչի) լրիվ անուն
Գործադիր տնօրեն պաշտոնը	

Առաջնային տեղաբաշխման աճուրդներին մասնակցություն հաճախորդների կողմից



Հետգնման աճուրդներին մասնակցություն հաճախորդների կողմից



Երկրորդային շուկայում իրականացվող պարտատոմսերի առք ու վաճառքի գործարք



Պետական պարտատոմսերով ռեպո/հակադարձ ռեպո գործարք

ԿԲ-ի և առևտրային բանկերի հետ



*ԿԲ հետ կատարվող գործարքներում պայմանագիր չի փոխանցվում

Պետական պարտատոմսերով ռեպո/հակադարձ ռեպո գործարք

Բանկի հաճախորդների և ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների հետ



ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԳՆԱՆՇՎՈՂ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ՌԵՊՈ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ



Ռեպո/հակադարձ ռեպո գործարքի մարում
Հաճախորդներ



Ռեպո/հակադարձ ռեպո գործարքի մարում
ԿԲ և բանկեր



Բանկի կողմից գնանշվող և թողարկված արժեթղթերի գրավով վարկի տրամադրում

Բանկի հաճախորդների և ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների հետ



Բանկի կողմից գնանշվող և թողարկված արժեթղթերի գրավով վարկի մարում

Բանկի հաճախորդների և ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների հետ